

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պետրոս Դեմիրճյան, բ.գ.դ.
ՀՀ ԳԱՎ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ «Գրականագիտական հանդես», թիվ ԻՎ /2/, 2020, էջ 3-25):

Բանալի բառեր - Տեմիրճիպաշյան, Եղիա, արվեստ, մշակույթ, գեղեցիկ, ներդաշնակություն, Էվոյուցիա, բնական, օգտապաշտական, ճշմարիտ, բարոյականություն, գրական քննադատություն

Մինչև գրական դասական կամ ընթացիկ գործերին Եղիա Տեմիրճիպաշյանի քննադատական վերլուծումներին ու գնահատականներին անցնելը, հարկ է անշուշտ, դիտել, թե ի՞նչ էր հասկանում նա գրականություն, մասնավորապես, բանաստեղծություն ասելով, ո՞վ էր, ըստ նրա, գրողը, ստեղծագործող անհատը, բանաստեղծը: Այս հարցի շուրջ Եղիան արտահայտվել է զանազան առիթներով՝ մամուլում, նամակներում, նախապատրաստել է մի առանձին հետազոտություն «Ի՞նչ է բանաստեղծությունը» խնդրի շուրջ, որը, սակայն, չի հասցրել ավարտել և որից հրապարակվել է մեկ-երկու հատված միայն:

Դեռևս 1884 թվականին, «Առ առաւօտ» բանաստեղծության տպագրությունից առաջ անստորագիր խմբագրական խոսքում «Երկրագունտ»-ի ընթերցողներին ներկայացնելով այդ քերթվածի հեղինակ, հանդեսի «նոր աշխատակից», երիտասարդ բանաստեղծ Հովհ. Սեթյանին, Եղիան նշում էր, թե «**Գրական գրօսանք** ի հեղինակն այն բանաստեղծներն է, որք աչաց օժանդակութեան դուն ուրեք կը կարօտին, **իրենց երգոց առարկայն ըլլալով մանաւանդ հոգւոյն յոյզերն ու սրտին վիշտերն քան արտաքին աշխարհին դէպքերն ու բնութեան տեսարաններն**»:¹ Մի քանի ամիս անց, Պերպերյան վարժարանի մրցանակաբաշխության հանդեսի իր ճառում, նա հավաստում է, թե «...**բանաստեղծին տունն երկրային անուշութեանց եւ երկնային ներդաշնակութեանց ժա-**

¹ Տես՝ Երկրագունտ, 1884, թիւ 4, էջ 188:/Այստեղ և հետագա տեքստում ընդգծումները մերն են. Բնագրային-հեղինակային ընդգծումները կտրվեն շղա-ով/:

մատեղին է յաւելտ»:¹ 1887-ին կրկնում ու հաստատում է, թէ «... ո՛վ որ **գրականութիւն** կ'ըսէ, կ'իմասայ լեզուի հետեւաբար ե՛ւ մտքի ճոխութիւն ու նրբութիւն, ազնուագոյն զգացմանց ու վեհագոյն մտածմանց արտայայտութիւն, երկրային եւ երկնային գեղեցկութեանց ցոլացում, ընկերական և հոգեկան կենաց բացատրութիւն, օրինաց ու բարուց աստիճանական բարուղում ու կատարելագործում»:² Եվ դարձյալ՝ 1888 թվականին, արդէն հիշատակված մի գրախոսականում եղիան նկատում էր, թէ «**Արտաքին իրաց ու դիպաց պատկերացումն՝ ներքին լուսատարր տեսլեանց ցոլացմամբք, այս է բարձրագոյն բանաստեղծութիւնն**»:³

80-ական թվականներին ընթացիկ ելույթներում, քնադատական առանձին հրապարակումներում արտահայտված կարծիքները 90-ականի սկզբից արդէն եղիա Տեմիրճիպաշյանը փորձում է դնել առավել ծավալուն տեսական ձևակերպումների մեջ՝ իր գեղագիտական-քննադատական հայացքները հնարավորինս ամբողջացնելու նպատակով: Այս իմաստով առաջիններից մեկը 1891-ին «Արեւելք»-ում հրապարակված «Բանաստեղծութիւն եւ ամուսնութիւն» գրութիւնն է:⁴ Այստեղ առաջին անգամ եղիան որոշակիորեն առաջադրում է «Ի՞նչ է բանաստեղծութիւնն» հարցը, որը նրա հրապարակումներում ամբողջ տասնամյակի ընթացքում կրկնվում է մի քանի անգամ: Պատահական չէ, որ Ե. Տեմիրճիպաշյանի տեսական այդ գրվածքները հրատարակիչները զետեղել են հենց «Ի՞նչ է բանաստեղծութիւնը», կամ «Բանաստեղծութիւնը» խորագրերի տակ, երբեմն նշելով, որ «Այսպիսի վերնագրով գործ չունի եղիա Տեմիրճիպաշեանը»:⁵

Կարևոր է ընդգծել, որ հիշյալ հրապարակման մեջ Ե. Տեմիրճիպաշյանը «Ի՞նչ է բանաստեղծութիւնը» հարցը չի անջատում «Ի՞նչ է բանաստեղծական կեանքն» հարցից. այսինքն՝ ըստ էության, նա ստեղծագործական, բանաստեղծական էությունն ու բուն /առարկայական/ բանաստեղծությունը ընկալում և դիտարկում է որպէս միասնական երևույթ: Ըստ այդմ դա «Չգայարանաց թափում թօթափումն է, հեշտին հալումն է սրտին. յարաթիչ ճախրանքն է հոգւոյն՝ զմայլանաց աներեւակ աշխարհներուն մէջ»: Բերելով Բայրոնի «Ծովահենն» քերթվածի

1 Ե., «Մանուկն եւ ազգն» /Ազգային բարեշրջութիւն/, «Գրական եւ իմաստասիրական շարժում», /հետագա տեքստում կտրվի ԳԻՇ հապավմամբ/, 1884, տետր իններորդ, էջ 168:

2 Ե., «Հասգիւղ», Երկրագունտ, 1887, թիւ 9-10, էջ 404:

3 Ե., «Սփոփանք ռամկին», էջ 472:

4 Տեմիրճիպաշեան Ե., «Բանաստեղծութիւն եւ ամուսնութիւն» /յոռետեսի մը ինդակցութիւնը/, Արեւելք, 1891, թիւ 2271:

5 Տեմիրճիպաշեան Ե., «Անգեղն երգ /բանաստեղծութիւններ/, Եր., Սարգիս Խաչենց. Փրինթինֆո, 2015, էջ 426:

օրինակը, որն սկսվում է «Ա՛նդր քան...» բառերով, Եղիան հաստատում է, թե «Բանաստեղծին կեանքն այլ կը սկսի տարանջատմամբ **այսր** ին եւ **անդր**ին», այսինքն՝ բանաստեղծը «անդրագոյնին կը տենչայ, անդրագոյնին մէջ կեայ, քանզի համակ հոգի՛ է նա»: Բանաստեղծի եղբայրներ, ըստ Եղիայի, չի կարող բավարարվել կամ պարփակվել սոսկ մարմնի, կյուքի, երկրային կյանքի սահմաններում: «Մարմնոյն պիտոյքներն **անգիտակցաբար** կը գոհացնէ եւ ընտանեկան հոգերով **ակամայ** կը զբաղի բանաստեղծն», գրում է նա, որից հետո, սակայն, «անուրջք մարմին կ'ամուռն եւ ստուերք՝ կերպարան ու հոգի, ուր՝ ուր ուրեմն՝ աստեղատուններէն շնորհաթափող աննշմարելի քնադեղն անզգալաբար կը թմրեցնէ արարածն, որ հեշտական կը մտնէ ի ծոց քնոյ,- որ մահուանէն յետոյ՝ յերկնից առ մարդն պարգեւեալ բարեաց գերագոյնն է»: Ընդ որում, թյուրըմբռնումներից խուսափելու նպատակով, հարկ է համարում նաև տողատակում ծանոթագրել՝ «Աւելորդ է ըսել թէ **բանաստեղծին տեսլականացեալ պատկերն է այս**»:¹

Տեսական դատողությունների այս շարքն այնուհետև Եղիան շարունակում է երկու տարի անց՝ 1893-ին, իր նախկին աշակերտ Միքայել Աբիսողովովին գրած նամակում: Այստեղ արդեն բանաստեղծի հոգու գերակայության գաղափարը՝ արտաքին աշխարհի նկատմամբ, մարմնավորվում է բանաձևի ուժ ունեցող հետևյալ տողում՝ «Տիեզերքն իմ **ես** իս ընդմէջէն կը տեսնեմ»: Նա խոստովանում է, թե «Աստուծոյ ձայներն ու դաշտաց տեսարաններն երբեք ուղղակի չեն արձագանգ գտներ գրուածոյս մէջ. պէտք է հոգւոյս մէջ ցոլանան անոնք...»: Ահա թէ ինչու, ուներ այն հստակ ու որոշակի համոզմունքը, թէ «Անձնական խազն ո՛րքան հզօր է բանաստեղծական արտադրութեանցս մէջ»: Շարունակելով կյուքի և հոգու թեման, Ե. Տեմիրճիպաշյանը գրում է՝ «Նկարագրական կամ զգայութեան բանաստեղծութիւնն այն է քնարերգական կամ զգացման բանաստեղծութեան՝ ինչ որ **ոչ-ես**ն է **ես**ին, ինչ որ հունաւորն անհունին, ինչ որ ստուերը՝ մարմնոյն»: Եվ որպէսզի ավելի հասկանալի լինի գրական հանրությանը՝ փոքր-ինչ ինտրիգային երանգով ավելացնում «ըսե՛մ, ինչ որ Փանոսեան՝ Դուրեանին»: Այլ խոսքով, Եղիան համոզված էր, որ «Կատարեալ, բարձրագոյն բանաստեղծութեան մէջ, բնութիւնն ո՛չ թէ կը գոհուի, այլ կը ստորադասուի: Շարժումն, յուզումն, յափշտակութիւնն, Աստուած, հոգւոյն մէջն է, մարդկային **ես**ին մէջն է. եւ այդ կենսաւետ աղբիւրին մէջ է որ պէտք է լոգանայ ու կենդանանայ բնութիւնը՝ նախ քան արտայայտուիլն ի բանաստեղծութեան»:

Ըստ Եղեյան, Ե. Տեմիրճիպաշյանը տարբերակում է «հոգու» /որի

1 Տեմիրճիպաշեան Ե., Տե՛ս «Բանաստեղծութիւն եւ ամուսնութիւն...»:

խորքում բնություն-բնականն է/ բանաստեղծությունը և «ձեւարուեստական հրաշակերտ» բանաստեղծությունը: «Բանաստեղծութիւն մը,- գրում է Նա,- պէտք է որ, կամ անելի ճիշդ՝ բանաստեղծութիւնը պէտք է որ – գեղարուեստից զարգացման կարգաւ զանոնք յիշելով – ճարտարապետութենէն փոխ առնու գիծն, արձանագործութենէն՝ ձեւը, պատկերահանութենէն՝ գոյնն, երաժշտութենէն /ու պարէն/ եղանակն ու կշռութիւնն, իսկ սրտէն...արի՛նը»: Նույն կերպ՝ «Միացո՛ւր քերթուածի մը մէջ Լըզոնթ տը Լիլի գիծը, Պօտըլեռի ձեւն, Հիւկօի գոյնը, Լամառդիսի երաժշտութիւնն ու չափականութիւնը. միացո՛ւր ինչ որ կրնայ բացատրել երանգանքութիւնն՝ աշխարհիս ամենէն հարուստ լեզուն. պիտի արտադրես սքանչելի ոտանաւոր մը, ձեւարուեստական հրաշակերտ: Պալգազի **Անծանօթ գլուխ-գործոցն**, այլ թէ՛ բանաստեղծութիւն մը, ո՛չ»: Ինչո՞ւ... Որովհետեւ թվարկվածների մեջ բացակայում է ամենակարևորը՝ «սրտին... արի՛նը»: Ուրեմն, ո՞ր դեպքում քերթվածը կփոխվի Եղիայի երազած «ճշմարիտ» բանաստեղծության: Ահա՛ այդ հարցի նրա սպառնիչ բացատրությունը՝ «Աչքեդ թող կաթիլ մը կաթէ կրակէ, սրտիդ արեան մէկ գնդակիկն հոն թող մտնէ, գիծ ու գոյն ու թանձրութիւն չունեցող այն բանն որ հազիւ թէ ծայն մ'է՛ թո՛ղ հառաչանքն – անթոյր անծաւալ բոցն հոգւոյն – վառէ վաւերէ քերթուածդ, եւ կենդանի բան մը ունիս...»: Դա այլևս ոչ թէ «ձեւարուեստական հրաշակերտ» է, այլ կենդանի, նույնիսկ «շէնող ու Նայող մարմար մը որոյ լանջքը կ'ուռի ու ճակատը կ'արտախորհի, որոյ երակք ո՛չ ներկով՝ այլ արեամբ գունաւորուած են»: Այդ դեպքում է, ահա, որ, ըստ Եղիայի, «ճշմարիտ բանաստեղծութիւն մ'ունիս հիմա. յոյն աստուածուհի՛ մը, խաչին հպմամբ կենդանացած ու քրիստոնէութեան մելամաղծութեամբ գեղաշնորհուած, յստակութիւնն իր շրջագիծին մէջ, տարտամութիւնն իր Նայուածքին մէջ, յափրանքն իր շրթանց վրայ,- բաղձանքն իր կրծոց վրայ, մահն իր գարշապարին տակ, անմահութիւնն իր ցուցամատին ծայր, իր ցուցամատին՝ մշտածիգ մագնետիկ զմայլանց»:

Ե. Տեմիրճիպաշյանը, իհարկէ, լիովին հաշիվ տալիս էր իրեն, որ «հազիւ ուրեք իրանալի մտատիպար» հանդիսացող նման «ճշմարիտ» բանաստեղծությանը «մերձեցումն, այդ մտատիպարին յաւետ կամ նուազ կատարեալ իրացումն ալ» ոչ միայն դյուրին բան չէ, այլև «դոյզն արժանիք մը չէ», քանզի դա ինքնիրեն չի ստեղծվում «Բանաստեղծն առ այդ պէտք է ձգտի»: Ընդ որում այդ ձգտումը «արուեստական» չպետք է լինի, այլ առավելագույնս բնական: «Ո՛չ աշխատիլ, այլ ամփոփուիլ,- մեկնաբանում է Եղիան: - Վայելման կամ վշտակրութեան պահուն ու-

տումնասիրել **յանգգայս** եւ ձեռքն **յանգգայս** կը ձգի գրչին ու կը շարժի թղթոյն վրայ. բաբախմանցդ հետ կ'ելեւէջէ գրիչդ, եւ արտասուացդ հետ կը գլորին պարբերութիւնք»: Ամեն բան պիտի կատարվի բնագոյաբար, ներքին մղումով, սրտի և հոգու թրթռումով... Պարզապէս «Հոգւոյդ մէջ կամ սրտիդ մէջ բա՛ն մը կար, որպէս իրիկնամուտին բա՛ն մը կայ երկնքի մէջ. չկաթող ոսկի արտասուքն որ յերկինս կը գոյանայ՝ յորժամ ստուերը յերկնի տարածուին իրիկնամուտին. անմարմին անմահ մասնկունք են որոնք կշռութեամբ՝ կոհակաց նման՝ կը կաթին աչքէն ու կը հոսին սրտէն, երբ Պէշիկթաշէան է մարդ կամ Պետրոս Դուրեան»:

»Բանաստեղծի դաւանանքս ահա յայտնեցի», ասում է Եղիան, միաժամանակ հայտարարելով, որ ամենւին էլ չի հավակնում բացարձակ ճշմարտության: Ընդհակառակը, խոստովանում է, որ «Եթէ տաղերս իմ տառապանացս արձագանգն են, եթէ կը տաղերգեմ ի՛նչ որ **ես** իս ընդմէջէն կը տեսնեմ, անտարակոյս չեմ յաւակնիր բացարձակ, բարձրագոյն հրաշակերտից հեղինակն ըլլալ»: Ըստ էության, ինչպէս որևէ անհատի, այնպէս էլ իր ստեղծագործության իրական արժեքի և խորքի գնահատությունը նա թողնում է խորունկ և բանիմաց ընթերցողի դատին: Իսկ ինչ վերաբերում է իրեն, ապա անկեղծորեն հայտարարում է, թէ «Բոլոր ի՛նչ որ արտադրած եմ բանաստեղծութիւն, կու տայի, նաեւ բոլոր գրելիքներս ալ, բոլոր, **Լա Մալխաշան**ին կամ Պայռընի **Մերձ ի մահին**... մէկ տունին փոխարէն»:¹

Տասնամյակի վերջին՝ «Մասիս»-ի 1899-ի մի շարք համարներում, Հուր Հայրան ստորագրութեամբ հրապարակած իր երկրորդ «Տաղարան»-ին կցած «Ներածութիւն»-ում, Ե. Տեմիրճիպաշյանն ավելի ծավալուն և բազմակողմանիորեն է անդրադառնում նշված հիմնահարցերին: «Աշխատութեան համար իր հրաւերին վրայ՝ մեր Շամտանճեանի «Մասիս»ին անտիպ բանաստեղծութեանցս Հաւաքածոյն տուած ժամանակս,- գրում է նա,- անդէպ չեմ համարիր երկու խօսք ընել բանաստեղծութեան ու բանաստեղծներու վրայ»:²

»Ներածութիւն»-ը բաղկացած է երեք մասից՝ «Ի՛նչ է բանաստեղծութիւնը», «Բանաստեղծութիւնը կը մեռնի» և «Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն»: Եվ այսպէս, «Ի՛նչ է բանաստեղծութիւնը» ավանդական հարցին գրեթէ մէկ տասնամյակ անց Եղիան պատասխանում է. «**Բանաստեղծութիւնը** մարդուս խօսքն է, երբ ներոյժ բերկրանք կամ

1 Թեոդիկ, Ամենուն Տարեցոյցը, 1923, էջ 62-64: Տե՛ս նաև «Անգեղն երգ», էջ 331-334:

2 Տեմիրճիպաշեան Ե., Տաղարան. Ներածութիւն, «Ի՛նչ է բանաստեղծութիւնը», Մասիս, 1899, թիւ 7, էջ 204:

ներոյժ տառապանք կը զգայ»: Եվ դարձյալ՝ «Բանաստեղծութիւնս, ինձ համար, մարդկային հոգւոյն երկու գլխաւոր փոփոխութեանց համեմատ երկուքի պէտք է բաժնուի.**գուարթ եւ տխուր**»: Ընդ որում այս «երկուքի» հարաբերությունը Նույնը չէ քրիստոնեությունից առաջ և հետո: Ըստ Եղիայի, «Քրիստոնեութենէն առաջ բանաստեղծութիւնը գուարթ ու տխուր է, կամ մեծապէս գուարթ եւ անզգայապէս կամ անզգիտակցապէս տխուր. քրիստոնեութենէն ետքը տխուր ու գուարթ, կամ հիմնապէս տխուր ու մակերեւութապէս գուարթ»: Բայց ամեն ինչ սրանով ևս չի ավարտվում, քանզի՝ «Միջին կամ չէզօք բանաստեղծութիւն մ'ալ կայ, որ անզգայներուն /impassible/ բանաստեղծութիւնս է, եւ, զոր ես չեմ կրնար բանաստեղծութիւն համարիլ, եթէ մարմարային անզգայ անշարժ ծելին տակը, շա՛տ խորը չը գտնեմ մարդուս հոգւոյն երկու գլխաւոր վիճակներէն մէկը,- պայծառ վիճակն ու մռայլ վիճակը...»:¹ Ինչ վերաբերում է «Բանաստեղծութիւնը կը մեռնի» հարցին, որը կարծես օրախնդիր էր դարձել մանավանդ «տիեզերաց վրայէն քօղը մերկասալով գիտութիւնը», երբ «մտածեր են թէ՛ մերկ եւ իրական բնութեան տեսիլն հմայաթափ պիտի ըներ մարդկութիւնս», ապա, մի թռուցիկ, բայց խոր հայացք նետելով պոեզիայի զարգացման ընթացքի վրա՝ Նախնի դարերից մինչև արդի ժամանակները, Եղիան հաստատում է, թէ «Այս երկիւղն անհիմն էր, առ երեւոյթս միայն հիմնաւոր»: ² «Ո՛հ, բա՛ն մը չը մեռնիր, եւ ամենէն յուսալ՝ բանաստեղծութիւնը,- ի վերջո, եզրակացնում է նա: - /.../ Բանաստեղծութիւնը մարդոց մէջ կայ ու կը զարգանայ. տրամաբանօրէն, եթէ մարդուն - որպէս Լիդմէ կը գուշակէ - աւելի կատարելագործեալ ուղեղով բարձրագոյն էակ մ'ալ յաջորդէ, ա՛ն ալ պիտի ունենայ բանաստեղծութիւն: Եւ ի՞նչպէս պիտի մեռներ բանաստեղծութիւնս, որ անմահութիւն կուտայ»: ³

Շարքի երրորդ՝ «Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն» հատվածը, ըստ Եղեյան, արվեստագետի, բանաստեղծի անհատական Եղեյան քննությունն է: «Մարդս երկու կերպով բանաստեղծ կ'ըլլայ», համոզված էր Եղիան՝ «բանաստեղծութիւններ կարդալով», կամ «**բանաստեղծութիւն ապրելով**»: Այսինքն՝ բանաստեղծների մի մասը «արուեստի գործ կը կատարէ», մյուսը՝ «կեանքի գործ»: Ե. Տեմիրճիպաշյանի բացատրությունն այս հաստատմանը շատ հստակ է՝ «Արուեստի բանաստեղծն ընդհանրապէս իր նիւթն ինքնիրմէն դուրս կ'առնէ, **կեանքի բանաստեղծն իր նիւթն ինք իր մէջ կը փնտռէ.իր նիւթն ինքն իսկ է**»:

1 Նույն տեղում, էջ 204-205:

2 Նույն տեղում, էջ 205:

3 Նույն տեղում, էջ 207:

Սա նշանակում է, որ մեկի համար բանաստեղծությունը՝ անկախ բովանդակությունից, սոսկ «ոտանաւոր շարագրութիւն մ'է», մյուսի համար՝ առավելագոյնս բնական, գրեթէ «անգիտակից արտադրութիւն», որ ծնունդ է առնում «արտասուքին կամ ժպիտին փթթման նման», որի մեջ «հոգին է որ կ'արտայայտուի, երբ պետքն զգայ արտայայտուելու եւ ոչ երբ կամք ունենայ բանաստեղծն արտադրելու»:¹ Հատկանշական է, որ նման տարբերակում անելով, Ե. Տեմիրճիպաշյանը, միաժամանակ, դեմ էր այն որևէ մեկին պարտադրելուն: Տողատակի ծանոթագրությամբ նա հայտարարում է, թէ «Յաւետ անկեղծօրէն խնդակցելի եւ այն հրապարակագիրք, որոնք նոր սերնդեան յորդոր կը կարդան լաւատեսութեան ու զուարթութեան: Սակայն **անհանդուրժելի է որ՝ հանդիպողն ելնէ պատգամ տալ բանաստեղծներուն եւ օրէնք դնել բանաստեղծութեան**»:² Ըստ Էուքյան, այդ կերպ նա արտահայտում էր **ստեղծագործական ազատության** մասին իր տեսակետը:

Ե. Տեմիրճիպաշյանը նշում է, որ «Մասիս»-ին տրամադրած բանաստեղծությունները գրել է իր կյանքի «ամենէն դժբաղդ» տարիներին, քանզի, ըստ նրա, «Դժբախտութեան մէջ ամենամեծ սփոփանքն եւ մարդուս համար հաւատքն ու բանաստեղծութիւնն»: «Աստուած բառին մէջ, ի խորոց հոգւոյն արտաբերեալ, ի՛նչ միսիթարութիւն կայ. եւ բանաստեղծութիւն մը, որ հոգիէն կամ սրտէն կը բղխի, քանիօ՛ն կը թեթեւցնէ կ'աւոքէ մեր վիշտն», գրում է նա:

Բանաստեղծությունը բաժանելով անձնականի և անանձնականի, Եղիան խոստովանում է, որ գրել է այդ երկու տեսակներով էլ, միայն թէ «զուարթ կամ անտարբեր» քերթվածների համար ընդհանուր խորագիր, կամ ինչպես ինքն է գրում՝ «ընդհանուր մակագիր մը» դեռ չի որոշել: «Տխուր քերթուածները», որ ավելի հարագատ էին իրեն, ամփոփել է «Հրայրք մութին» խորագրի տակ, քանի որ խոստովանում է, թէ «Չիս ամենէն աւելի ներշնչողը մութն եղած է միշտ. երեկոյեան ստուերներն, անդնդոց ու հոգւոյն մութ ալքերը, խաչն – իր ոտքի մութ գանկն եւ իր գլխուն վրայի մութ ամպը, սեւ մազերն ու սեւ աչքերը, ագռաւն ու անգղը, բուն ու փոթորիկը, ինչ որ սեւ կ'երգէ եւ ինչ որ սեւ կը թորէ»: Եվ ապա՝ «Ո՛հ, հրայրքով՝ այո՛ կը սիրեմ մութն. եւ հոգւոյս ճիչերով կը գծագրեմ զայն թուղթին վրայ»: Մեկ այլ տեղ բանաձևում է՝ «Բանաստեղծութիւն, հրապոյր, ո՛հ, փնտրողն ո՞ր էր չը գտներ, մինչեւ իսկ դժբախտութեան

¹ **Հուր Հայրան**, «Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն» /Շար./, Մասիս, 1899, թիւ 8-9, էջ 247:

² Նշված տեղում:

մեջ...»: ¹Միաժամանակ, Եղիայի փափագն էր, որ ճիշտ ընկալվելով ու հասկացվելով, իր քերթվածներն իրեն «ըրած բարիքնին իրենց ընթերցողներուն ալ ընէին»: Եվ կարծես ինչ որ տեղ նաև գոհ էր, որ «Արդէն քանիսն էր ընթերցողներն անոնց անտիպ բանաստեղծութիւններս», մինչև անգամ նշելով, թէ «ոմանք նոյն իսկ ... իրաւունք սեփականեցին իրենց՝ անոնցմէ մէկ քանին վար դնելու»:²

Ժամանակի գրական հանրությունը, անգամ իր մտերիմ շրջապատը, սակայն, բազմիցս քննադատել են Եղիա Տեմիրճիպաշյանին՝ անձնական, այսպես կոչված, «ես»-ի, կամ «ենթակայական» բանաստեղծությանը հավատարիմ մնալու համար: Հետագային թողնելով այդ և այլ խնդիրների շուրջ արևմտահայ մամուլում ծավալված բանավեճերի վերլուծությունը, այստեղ նշենք միայն, որ «Ես» խորագրով այդպիսի մի հրապարակման³ առիթով, նա հանդես է եկել «Չարգացումն «ես»ին, ըստ Եղիայի, ինքնավերլուծական հոդվածով, որում ջանում էր պաշտպանել «ենթակայական» գրականության իրավունքները: Այստեղ ևս նա հարկ է համարում ներկայացնել ստեղծագործական անհատականության Եղիայի վերաբերյալ բազմիցս արտահայտած իր տեսակետը, ըստ որի «...գորոշ մ'իւր անձին վրայ կրնայ խօսիլ երկու եղանակաւ, **ուղղակի** կամ **անուղղակի**»: Այսինքն՝ «Կան հեղինակք՝ որոնք իրենց «ես»ը կամ կեանքը կը դնեն ուղղակի՝ իրենց գործոց մէջ. կան ալ՝ որոնք իրենց կեանքէն կը դնեն իրենց երկասիրութեանց մէջ»: Կարճ ասած՝ «Հայցականի և բացառականի տարբերութիւն»:⁴

Մինաս Զերազի վկայությամբ, «հակառակորդներէն ոմանց» կարծիքով Ե. Տեմիրճիպաշյանը նույնիսկ «գուրկ էր քննադատական ոգիէ»: ⁵ Ըստ Հրաչյա Պետրոսյանի, նրա «բազմաթիւ տեսութիւններն /.../ չունին յաճախ քննադատի լրջութիւնը»:⁶ Հակոբ Օշականը՝ հավաստելով, որ Տիրան Զրաքյանի յուրաքանչյուր քննադատական ելույթ «վկայութիւն մըն է Զրաքեանի հոգիէն», այդ արժանիքն ու խորքը զանազան եղանակներով է միայն Արտ. Հարությունյանին ու Ա. Զոպանյանին, այլև Եղիա Տեմիրճիպաշյանին:⁷

1 «Ե. Դուրեան եպիսկոպոս», Արեւելք, 25 նոյ., 1898:

2 **Հուր Հայրան**, «Անձնական եւ անանձն...», էջ 249:

3 Տե՛ս Հայրենիք, թիւ 413:

4 **Տեմիրճիպաշեան Ե.**, «Չարգացումն «ես»ին», Մասիս, 1893, թիւ 3982, էջ 146-147:

5 **Զերազ Մ.**, Կենսագրական կիսհոսններ, էջ 33:

6 **Ֆեներճեան Գ., Պետրոսեան Հր.**, Եղիա Տեմիրճիպաշեան. Իր կեանքը եւ իր գործը, Կ.Պոլիս, 1921, էջ 93:

7 **Օշական Յ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 8, Անթիլիաս, 1980, էջ 136:

Դեռևս 80-ականի կեսերին, «Գրադատության պակասության» հոդվածում Ե. Տեմիրճիպաշյանը հայտարարում է, թե «մեր ազգին մեջ գրեթե չը կայ գրադատություն», այդ իրողությունը հիմնավորելով նաև այն փաստով, որ «Գրագետը, որը նիւթական ու բարոյական մեծամեծ զոհողությամբք երկասիրություն մ'երեւան կը հանեն, ապաքեն անտես կ'անցնին ամբոխին մէջ»:¹ Օրինակ բերելով եվրոպական նույնիսկ «ամենալուրջ քաղաքական թերթերն», որոնք «առիթ կը գտնեն, անվրէպ ամեն նոր հրատարակութեանց ու թատերց վրայ գրադատական յատուկ յողումներէ գատ, իրենց խմբագրական յողումոց մէջ իսկ հռչակել մեծ մատենագիրներուն ծառայութիւններն առ ազգն», Ե. Տեմիրճիպաշյանը ցավով նշում է, որ հայոց մեծ ու փոքր օրաթերթերն անտարբեր են գրի ու գրականության, «գրական շարժման» հանդէպ: Իր արտահայտությամբ՝ «վշտացած» էր բոլոր նրանցից, ովքեր չէին նկատում, թե **«Հայոց մէջ ալ կայ գրականութիւն, թէ կան գրագետք որք ազգին մէջ իրական ու տեւական գործ մը կը կատարեն**, մշակելով ազգային լեզուն, զարգացնելով միտքերն, ազնուացնելով սիրտերն, փափկացնելով ճաշակներն»:² Մինչդէռ, ըստ նրա, հայ մամուլը, մասնավորապէս, «Ազգային տեսութեանց յողումագիրք, /.../ յիշելու էին մերթ ընդ մերթ այն Հայկազունքն՝ հին եւ նոր՝ ոյց պարտի Հայութիւնն իր սրտի ու մտաց մշակութիւնն: **Օրաթերթք պարտէին՝ գէթ նուա՛գ արհամարել գրականութիւնն**»: Վերջապէս ընդգծելու համար գրողի՝ բանաստեղծի, դերի ու նշանակության կարևորությունը ազգային թե մարդկության կյանքում, Եղիան դիմում է հայտնի ավանդույթներից մեկի օգնությանը: «Սպարտա՝ տագնապի մը ժամանակ՝ զօրավար մը խնդրեց Աթենքէն,- գրում է նա. - Աթինացիք՝ որք կը նախանձէին Սպարտացւոց՝ զօրավարի տեղ բանաստեղծ մը յղեցին հեգեսթէն. Սակայն բանաստեղծն ըրաւ՝ ինչ որ զօրավարն անկարօղ պիտ'ըլլար ընել գուցէ»:³

Որոշակիորեն տարբերակելով «վարչական մարդն ու գրական մարդն, որք իրենց յատուկ տեղերն ունին», Ե. Տեմիրճիպաշյանը, սակայն, մինչև անգամ եկեղեցական առաջնորդների ընտրության հարցում, նախապատվությունը տալիս էր նրան, ով ունակ էր միացնելու այդ «կրկին կարողութիւններն»: Նա խոստովանում է, որ ամենակին չնսեմացնելով Կ. Պոլսո հայոց Պատրիարք ընտրված Տ. Հարություն Վեհապետյանի «վարչական կարողութիւնն ու գործնական ոգին», ավելի գոհ և ուրախ կլիներ, եթե վերջինս «Վարժապետեանի կամ Նար-Պէյի պերճա-

1 ԳԻԾ, 1884, տետր երկուսասներորդ, էջ 225:

2 Նույն տեղում, էջ 226:

3 Նույն տեղում, էջ 227:

խօսութեամբն եւ կամ խրիմեանի բանաստեղծական հանճարովն օծտուած ըլլար»:¹

Այնուամենայնիվ, ո՞վ է ճշմարիտ գրագետը, բանաստեղծը, որո՞նք են նրա էութունը կազմող տարրերն ու հատկանիշները: Այս հարցերի պատասխանը առավել հանգամանորէն է. Տեմիրճիպաշյանը փորձում է տալ Մեգպուրյան վարժարանի մրցանակաբաշխության հանդեսում արտասանած իր ատենախոսության մեջ: Իր մտերմի՝ մեծանուն մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի դասեր՝ «միամեայ միակ Գեղանոյշի» մահը այդ օրերին եղիայի համար ավելի քան բավարար առիթ էր արտահայտելու իր մտքերն ու տեսակետները կյանքի ու մահվան, առաջադիմության, կրթության ու մշակույթի, գրողի էության և հասարակության մեջ ունեցած դերի շուրջ: Թվարկելով կյանքի ընթացքում մարդուն հանդիպող մեծ փորձությունները, և կյանքը համեմատելով անվերջանալի պայքարի կամ «մարտի» հետ, նա հաստատում է, որ այդ ամենը, ի վերջո, «երկու բառերու մէջ կը բովանդակին – Կեանք եւ Յառաջադիմութիւն»: Սակայն, ըստ նրա, ամեն բան այնքան էլ միանշանակ չէ, առաջադիմութիւնն ուղղագիծ շարժում չէ, այլ շատ անգամ հակադիր կողմերի պայքար ու հետևանք: «Այո՛, կեանքն ստուերներով ու շողերով է լի, գրում է Ե. Տեմիրճիպաշյանը, - այո՛, յառաջադիմութիւնն այս պայմաններով կը կատարուի: Սերունդի մը ծեռօք ստուերաց ծոցէն բխր տաժանօք խլեալ շողերն՝ յաջորդ սերնդեան իբրեւ ջահ կը ծառայէն. եւ սերունդի մը աչքէն կաթած արտասուքներն՝ յաջորդ սերնդեան սրտին մէջ զգացման գանձեր ի գոյ կածեն»: Բայց դա պայմանն է նաև բանաստեղծի՝ մարդկային ու ստեղծագործական առաջադիմության: Քանզի բանաստեղծությունը ևս «այսպէս՝ սկիզբն կ'առնու եւ կը զարգանայ տակաւ, ծնանելով արտասուքէն»: Ինչպէս որ աշխատանքով է զորանում մարդը՝ քրտինքը փոխարկելով ուժի և հարստության, այդպէս նաև բանաստեղծը՝ «որքան տառապի, այնքան կ'ազնուանայ. որքան խոր իջնէ կենաց ու տիեզերաց անդունդներն, այնքան բարձր կը սաւառնի մտաց վերնազաւառներն»: Վերջապէս, առավել մատչելի-հասկանալի ձևակերպմամբ՝ «որքան լայ, այնքան կը մեծանայ...»:² Ահա թէ ինչու, համոզված էր Ե. Տեմիրճիպաշյանը, այդպիսի ստեղծագործ անհատի, այսինքն՝ «հանրային մարդուն, դաստիարակին, գրագետին, բանաստեղծին, երեսփոխանին դժբախտութիւնն հանուրց համար ալ է դժբախտութիւն»:³ Մեկ

1 «Առաջնորդական խնդիր», ԳԻՇ, 1886, տետր երկրորդ, էջ 19-20:

2 «Մահ, Կեանք, Առաջադիմութիւն, Դպրոց», ԳԻՇ, 1885, տետր ութերորդ, էջ 153-154: Այստեղ արժե դիտել սույն տողի ներքին կապը հետագայում Վ. Թեքեյանի՝ «լաց որ մեծնաս» հայտնի տողի հետ:

3 Նույն տեղում, էջ 151:

այլ գրության մեջ եղիան խոստովանում է, թե հենց գրական ասպարեզի մեջ «կը գտնեմ միանգամայն տառապանքս եւ սփոփանքս»:¹ Պատահական չէր նաև, որ «Արեւելք»-ում տպագրած իր մի հոդվածում /սվիրված Հովհաննես Հովհաննիսյանի Մոսկվայում լույս տեսած «Քանաստեղծութիւններ» ժողովածուին/ Լ. Բաշայանը՝ իր տեսակետները հաստատելու համար, հղում էր անում նաև Ե. Տեմիրճիպաշյանին: Մեջբերելով Հովհ. Հովհաննիսյանի տողերը՝ «Ա՛խ տուէ՛ք ինձ քաղցըր մի քուն, // Կեանքից հեռու՝ սըլանամ // Այն աշխարհը, ուր խնդութիւն, // Ու սերն է միշտ անթառամ», գրում է, թե «Ճիշդ տեղն է յիշատակել մեր մէջ դարուս հիւանդութեան անբաղդատելի երգչին՝ Տեմիրճիպաշեանի սա խօսքերը. «Եւ տառապանքն արդի կենաց պայմանն է...»:² Պետք է ասել, որ պատահական չէր նաև Լ. Բաշայանի հիշյալ հոդվածի արտատպությունը Ե. Տեմիրճիպաշյանի խմբագրած հանդեսում: Եվ ահա թե ինչու: Այսպես կոչված, «դարի հիվանդության» հիմնարար հատկանիշներից մեկը համարվող **Տառապանքի մոտիվը** ժամանակի գրական հանրության կողմից ամենաշատ քննվող խնդիրներից էր: Հիշյալ հոդվածում Լ. Բաշայանը նույնպես անդրադարձել էր այդ մոտիվին, ընդ որում բավական լայն ու խորքային ընդգրկմամբ: Հովհ. Հովհաննիսյանի «փոքրիկ հատորի» առիթով, նա խոսում է ընդհանրապես ժամանակի ռուսահայ բանաստեղծության մեջ կատարվող տեղաշարժերի մասին. «... այս տեսակ բանաստեղծութեան գիրք մը երբեք չէր եկած Ռուսահայոցմէ», ոգևորված գրում է նա: Եվ ավելին՝ «Առանց ոչ գոք վիրաւորել ուզելու, բացայայտապէս կրնանք ըսել թէ Ռուսահայոց մէջ բանաստեղծութիւնն երբեք չէր զգացուած ինչպէս կ'զգացուի այլուր»: Իսկ ո՞րն էր այն նորը, որ այդպես ոգևորել էր Լ. Բաշայանին. «Ի բաց առէք հայրենասիրական հոգեշունչ երգերը, զորս ռուսահայ բանաստեղծը գիտեն յօրինել այնքան խանդով ու ճարտարութեամբ, մնացեալ քերթուածք բոլորովին զուրկ են այն ոգին որ պետք է թրթռայ բոլոր տաղերու մէջ: Բանաստեղծութեան մէջ պետք է գտնես բարձրագոյն բան մը որ յուզէ, վերացնէ, հորիզոնէ անդին փոխադրէ գեղ, թռիչ տայ երազներուդ եւ ցունց տայ յոյգերուդ, մոռցնել տայ քեզ իրական կենաց բոլոր տափակութիւններն, ու մտածել տայ քեզ, ու տխրեցնէ քեզ, ու լացնէ»: Եվ Լ. Բաշայանը համոզված էր, որ «3. Յովհաննիսեան այս հիմնական յեղափոխութիւնը կը մտցնէ Ռուսահայոց բանաստեղծութեան մէջ», քանզի «Պ. Յովհաննիսեան դարուս հիւանդութեան զոհերէն մին է», և «Իւր քերթուածք իւր սրտին

1 «Հիւանդութիւնս», ԳԻՇ, 1885, տետր տասներորդ եւ մետասաներորդ, էջ 177:

2 **Բաշայեան Լ.**, «Գրական սուրհանդակ» բաժնում, արտատպ. «Արեւելք»-ից, Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 477-478:

անդամագնությունն են»։ Իսկ ի՞նչ է, ըստ էության, այդ «դարի հիւանդութիւնն»... «Սոսկալի բան մ'է այն,- ասում է Լ. Բաշայանը,- /.../ Հնութեան վիշապին հանգունատիպ, հարիւր անուն ունի. տխրութիւն, մեղամաղձութիւն, միստիկութիւն, սկեպտոութիւն, յուսահատութիւն, յոռետեսութիւն, **սքիւն**, ջլախտութիւն, ու դեռ չեմ գիտեր ինչ։ Այլ ասոնց ամենուն մէջ հասարակաց բան մը կայ, տառապանքն։ Այո՛, **դարուս հիւանդութիւնն է տառապանքն, այսինքն անբացատրելի վիշտ մը անբացատրելի բանի մը համար**։ Իւր զոհերն այսօր չեն համրուիր. լեզուն կը կազմեն։ Իւր ազդեցութիւնը գերիշխան է մանաւանդ գրականութեան մէջ»։¹

Ուրեմն, որո՞նք էին այն չափանիշները, որոնցով պետք է գնահատվէին 19-րդ դարակեսին ստեղծված գրական արժեքները։ Դեռևս 80-ականների կեսերին՝ Գվիդոն Լուսինյանի նամակի առիթով, Եղիա Տեմիրճիպաշյանը նկատում էր, թե իր «Անգեղն երգ» քերթվածի տպագրությամբ «**Հայ քերթութիւնն որոշապէս կը թեւակոխէ Նոր շրջանի մը - իմաստասիրական շրջանին - մէջ**»։ Որ սա պատահական մի ֆրագ չէր, այլ սկզբունքային, **ծրագրային** մոտեցում և համոզմունք, երևում է հաջորդ իսկ տողերից՝ «Ըստած է թէ Բանաստեղծութիւնն Իմաստասիրութեան հետ անհաշտ է,- գրում է Եղիան։ - **Գուցէ տաղերովս ալ յաջողիմ հակառակն ապացուցանել**. եթէ չը մատնեն զիս անձնական դժբախտութիւնք - իմ վեհագո՛յն մուսայք»։² Մեկ այլ առիթով, մեջբերելով «Ֆռանսայի Համալսարանին ականաւոր ուսուցչաց» մեկի կարծիքը, թէ «Իմաստասիրական ամեն Նոր մտածութիւն իր հետեւութիւններն ունի Մանկավարժութեան համար. եւ հաւատալ Մանկավարժութեան, Իմաստասիրութեան է հաւատալ», հարց է տալիս՝ «Իսկ Գրականութիւնն օտա՞ր է միթէ Մանկավարժութեան եւ Իմաստասիրութեան»։ Քանզի, ըստ նրա, «Մտաց գիտութիւնն է **Իմաստասիրութիւնն**. Իսկ **Գրականութիւնն** է գիտութիւնն այն ձեւոց, զորս զգենով պարտի միտքն իր արտայայտութեանց մէջ **Մանկավարժութիւնն** ալ այն գիտութիւնն է, որ կ'ուսուցանէ թէ ինչպէս պարտինք զարգացնել մանկան խորհելու եւ խօսելու կարողութիւններն»։ Ահա թէ ինչու, Եղիան նաև մտահոգվում էր, որ «**Հայ մամուլն ընդհանրապէս ըմբռնած չէ տակաւին ոչ Իմաստասիրութեան, ոչ Գրականութեան, ոչ Մանկավարժութեան կարեւորութիւնն**»։³ Պատահական չէր նաև, որ Ե. Տեմիրճիպաշյանը «Երկրագունտ»-ում թարգմանաբար հրատարակում է Ալֆրեդ Ֆոյլեյի մի հոդվածը, որում հեղինա-

1 Նույն տեղում, էջ 473:

2 ԳԻԾ, 1884, տետր տասներորդ, էջ 203:

3 «Երրորդ Ներսիսեան ուսումնարան», ԳԻԾ, 1884, տետր երկուսասներորդ, էջ 230:

կը ևս հաստատում էր, թե «Իմաստասիրութիւնն երբեք վնասած չէ՝ ոչ միայն գիտութեանց, այլև գրականութեան...»: Ապա իր տեսակետը հիմնավորելով ֆրանսիական մի շարք դասական գրողների օրինակներով, եզրակացնում «Մեր արդի լաւագոյն մատենագիրք ալ իմաստասերներ են. մեր ժամանակակից քերթողաց ամենէն գեղեցիկ էջերն իմաստասիրական ներշնչումներ են, /.../ մեր լաւագոյն թատերգութիւնք ու մեր լաւագոյն վիպասանութիւնք՝ բարոյական իմաստասիրութեան ու հոգեբանութեան թատրերգք ու վէպք են»:¹

Այս ամենից հետո օրինաչափ էր, որ Եղիա Տեմիրճիպաշյանը նախապատվւթյուն պիտի տար, ընդհանուր ձևակերպմամբ, «պիտանի» գրականությանը: «Երկրագունտ» հանդեսի «Ազդ»-երից մեկում, օրինակ, մտահոգութիւն էր հնչեցվում այն կապակցությամբ, որ «Չքօսանքի /իմա՝ ժամանցի-Պ.Դ./ գրեանք համեմատաբար շատ կը հրատարակուին մեր մէջ, իսկ պիտանի գրեանք քիչ»:² Ահա թե ինչու, հորդորում էր բոլոր գրի ու խոսքի մարդկանց «հնար եղածին չափ խղճմտօրէն» աշխատել՝ «յիշելով թե հազարաւոր ազգայնոց ուղղեալ դասախօսութիւնք են իրենց հրատարակութիւնք»: Ապա թե՛ «**Խղճամիտ աշխատութիւնք յամր կը կատարուին**. Եվ մատենագրութեանց համար անշուշտ ըսած չէ Սենեկա թե՛ Արագ տուօղն երկիցս կու տայ. *Bis dat qui cito dat*»:³ Որովհետև, ինչպէս Խաչիկ-Հայկ երկխոսության մէջ նկատում է, ըստ Էուբյան, Եղիայի տեսակետներն արտահայտող Հայկը, «Ուսմունքը կամ վնասակար է կամ օգտակար. գիրքը կամ յառաջադիմութեան գործիք մ'է կամ յետադիմութեան. վարժապետը կամ քաղաքակրթութեան մեծ գործաւորն է կամ բարբարոսութեան...»:⁴

Վերջապէս, **ազգային թե համամարդկային գրականութիւն** ժամանակի առաջադրած խնդրի վերաբերյալ Ե. Տեմիրճիպաշյանն ուներ իր հստակ տեսակետը, ըստ որի, ի հակադրութիւն այն հեղինակների /Մ. Աղաբեգյանց, Իգմիրյանց ևն/, որոնք գտնում էին, թե «ազգի մը յառաջադիմութեան, ազգայնութեան մը բարոյական պահպանման համար հարկ է որ ազգի մը բոլոր մատենագիրք ալ «ազգային գրականութիւն ընեն», նա կողմնակից էր «յայտնապէս գրականութեան ազատ զարգացման՝ ազգային թե՛ մարդկային համայնադէմ ուղղութեամբ»: Եվ այդ տեսակետը հիմնավորում էր նրանով, որ «Ազգի մը սեփական հանգամանաց

1 Փոլյէ Ա., «Բարենորոգումն իմաստասիրական ուսուցման», Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 483-484:

2 Երկրագունտ, 1885, թիւ 7, էջ 337:

3 Ե., «Վարք երեւելի արանց», Երկրագունտ, 1886, թիւ 1, էջ 36:

4 Ե., «Դրական հաւատք» /Ազգային խօսակցութիւնք/, Երկրագունտ, 1887, թիւ 9-10, էջ 382:

բացարձակ պահպանման գաղափարն անհաշտ է բարեշրջութեան վարդապետութեան հետ», ուստի և «անօգուտ է կամփի կամ բաղձալ թէ Ռուս կամ Հայ գրականութիւնը զուտ ազգային ըլլայ, միմիայն ազգային շրջանակին մէջ թաւալի»: Այլ բան է, եղիայի համոզմամբ, որ «զուտ ազգային հեղինակներն աւելի եռանդեամբ պիտ'աշխատին եւ իրենց թիւն ալ պիտ' աւելնայ, եթէ Նիւթական ու բարոյական խորախուսանաց արժանանան»: ¹ Ընդ որում, նա իր այս տեսակետը փորձում էր ամրապնդել նաև մի քանի գործնական դիտարկումներով ու առաջարկներով: Ե. Տեմիրճիպաշյանը կարծում էր, օրինակ, որ արդյունավետ կլինէր, Սահակ Մեսրոպյան մրցանակի «մնայուն Յանձնաժողովոյն նման», ստեղծվեր նաև մի այլ պաշտոնական մարմին՝ մրցանակի ներկայացված «աշխատութեանց յատուկ քննութեան համար»: Առաջարկում էր գնահատել ո՛չ միայն կյուրժը՝ բովանդակությունը, այլև ձևը, քանզի՝ «Գրականութիւնը ստեղծվի միթէ **Նիւթ** ին /**fonde**/ հետ **ձեւ** և /**forme**/ ալ չէ՞նք իմանար»: Թաշալերում էր Մանուէլ Միրախորյանի «Նկարագրական ուղեւորութիւն» գործի առանձնացմանը, որովհետև դրանով «Իզմիրեանց կտակին մրցանակը կը յատկացուի Հայաբնակ գաւառաց նկարագրութեան, որպէս զի Հայ գրագէտը հրապուրուի անձամբ տեսնել Հայրենի գաւառներն և խղճմտօրէն զայն ուսումնասիրել յօգուտ ազգին...»: Վերջապէս, ահազանգում էր, թէ պետք են նոր բարերարներ, որ մրցանակներով խրախուսեն բուն «ազգային գրական» գործերը... ²

Տեսական հարցադրումների հետ մեկտեղ Ե. Տեմիրճիպաշյանը հանդես էր բերում ինչպէս գրական ընթացքի, այնպէս էլ առանձին հեղինակների ստեղծագործության քննության ու գնահատության գերազանց կարողություն: Նախ և առաջ պետք է նշել այն մեծագույն սերն ու պատկառանքը, որ նա ուներ գրական նախորդ մեծերի անձի և ստեղծագործության նկատմամբ: Բնորոշ է պարբերական մամուլի հոգսերին ու խնդիրներին նվիրված եղիայի ծավալուն հրապարակումներից մեկը, որում հին ու նոր բանաստեղծների բարձր գնահատումը, նրանց մատուցվող մեծարանքը մերժողների անհիմն ու անհարկի ելույթներից մղված, ստիպված էր բացականչել՝ «Եւ միթէ յանցա՞նք է գովել՝ գովելին. եւ միթէ բանաստեղծք այնքա՞ն հասարակ էակներ են. Հոմերոս բանաստեղծ էր. Ալիշան բանաստեղծ է. Խրիմեան ու Նար-Պէյ բանաստեղծ են. Օտեան ու Պէշկիթաշլեան բանաստեղծ էին. եւ ունինք այսօր Պէշկիթաշլեաններ, ոյք կ'երգեն **Երկրագունտ** ի մէջ»: ³

1 Ե., «Մրցանակ Սահակ Մեսրոպեան», Երկրագունտ, թիւ 9-10, էջ 355-356:

2 Նույն տեղում, էջ 357-359:

3 Ե., «Մեր պարբերական մամուլը», Երկրագունտ, 1888, թիւ 6, էջ 280-281:

Եղիա Տեմիրճիպաշյանը առանձին սեր և նույնիսկ ներքին պատկառանք ուներ, մասնավորապես, Հայր Ղևոնդ Ալիշանի նկատմամբ: Հ.Սիմեոն /Սիմեոն Երեմյան/ մեկնաբանելով Ե. Տեմիրճիպաշյանի «Առ Թովմաս Էֆ. Թերզեան» քերթվածը, այն կարծիքն է հայտնում, թե նա վերջինիս ստեղծագործությամբ հիանում էր նաև այն պատճառով, «զի Թերզեան Ալիշանին աշակերտած էր»:¹ 1880 թվականին՝ Մշակ կեղծանունով հրատարակած ազգային և օտար մատենագիրների գործերից քաղված «Հատընտիր» ժողովածուում նա գրում էր. «Ազգային ամենաբարձր հեղինակներից մին է Հ. Ղևոնդ Ալիշան, անդամ Վենետիկյ Մխիթարեան միաբանության: Իբրեւ բանաստեղծ մատենագիր, ապաքէն կը գերազանցէ Հ. Արսէն Բագրատունին. իսկ իբր հայրենասէր մատենագիր, ախոյեան չ'ունի բոլոր միաբանութեան մէջ: Կը գուշակեմ թէ կրնակն Հռոմայ եւ Երեսն Արեւելք, Հայաստան դարձուցած կը նստի Վանքին մէջ լուսատենչ եւ հայրենատենչ Ալիշան...»:²

Եղիա Տեմիրճիպաշյանը, իհարկե, որոշ առարկություններ ուներ ինչպես Ղ. Ալիշանի, այնպես էլ Մխիթարյանների ինչ-ինչ տեսակետների վերաբերյալ: Եվ դրանք արտահայտում էր հրապարակայնորեն: Դավանելով ստեղծագործ անհատի ներքին լիակատար ազատության գաղափարը, նա, օրինակ, ինչ որ տեղ ափսոսանքով էր նկատում, որ «Ի ծննդէնէ մեր ամենէն իսկապէս անձնական եւ անկախ բանաստեղծն՝ Ալիշան՝ հազիւ անձնական խազը կը յաջողի թմրեցնել քրիստոնէական անանձնականութեան ներքեւ, զոր սքեմն իրեն վրայ պարտ կը դնէ եւ զոր իր հոգին ընդգրկած է յօժարակամ»:³ Նույն կերպ, մեկ այլ գրության մեջ, ցավ էր հայտնում, որ Մխիթարյան Միաբանությունը «բաւական» չի հետևում ժամանակին, չի հրաժարվում արդեն դարն ապրած գրաբարից, մինչդեռ «պիտի վերստանար իր նախկին դիրքն՝ ազգային կրթութեան եւ արդի գրականութեան զոհելով իր նիւթական ու բարոյական գանձերն»:⁴ Այդուհանդերձ, հանուն և ընդդէմ Վենետիկի եղած տեսակետների մեջ Եղիան իրեն տեսնում էր նրանց շարքում, որոնք միշտ էլ ընդունել ու ճանաչել են Մխիթարյանների գործի «կարեւորութիւնն ու վեհութիւնն»:⁵ Նույն հրապարակման մեջ նա իրեն համարում է «Մխիթարեանց բարեկամը», նույնիսկ խոստովանելով, թե գիտի՝ «ի՞նչ կ'արժեն Մխիթարեանք» և սիրում է «զՄխիթարեանս»:⁶ Այդպես, Ե. Տեմիրճիպաշյանը, ամբողջությամբ

1 Հ. Սիմեոն, «Եղիա Տեմիրճիպաշեան», Ազգային դէմքեր /Գրագետ հայեր/, 1-10 շարքի 4-րդ շարք, Վենետիկ, Տպ. Ս.Ղազար, 1913, էջ 121:

2 Մշակ, Հատընտիր ընթերցուածք ազգային եւ օտար մատենագիրներէ քաղուած, Կ.Պոլիս, 1880, էջ 19:

3 Տեմիրճիպաշեան Ե., «Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն», էջ 509-510:

4 Ե., «Վենետիկ», Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 509-510:

յան մեջ շատ բարձր էր գնահատում Ղևոնդ Ալիշանի տաղանդն ու դերը հայոց գրապատմական ընթացքի մեջ: Նույնիսկ, խոսելով Մխիթարյանների ժամանակից ետ մնալու մասին, եղիան վերապահում էր անում Ղ. Ալիշանի վերաբերյալ. «Մխիթարեանք, եթէ ճշմարիտ գրագետներ են՝ որպէս կը յաւակնին ըլլալ», գրում է նա, պարտավոր են ծանոթանալ ու հետևել արդի գրական շարժման ընթացքին, մանավանդ որ, ըստ նրա, «**Եթէ բացառենք Ալիշանն՝** այսօր Վանքէն դո՛ւրս տեղի կ'ունենայ գրական շարժում»:¹

Բարձր գնահատելով Մխիթարյանների ավանդը հայ և համաշխարհային գրականության դասական և ժամանակակից մնայուն արժեքները ժողովրդի մեջ տարածելու գործում, Ե. Տեմիրճիպաշյանը մեծ ոգևորությամբ ընդունում և հանրությանն է հանձնարարում Միաբանության հրատարակած «Ծաղկաքաղ հատուածք» ժողովածուները: Մասնավորապես, երկրորդ հատորի հրատարակման առիթով, նա նույնիսկ «պարտք է դնում» հայրենասեր ընթերցողների վրա՝ անպայման «առնուլ զայն և ընթեռնուլ»: «Պիտանի գեղանի, հիանալի մատեան մ'է Ծաղկաքաղն, գրում է նա, - զոր կ'ընթեռնում առաւօտուն, զոր կ'ընթեռնում ամէն իրիկուն - և դեռ չեմ յագէտար, /.../ բոլոր զգայուն, վեհագոյն հոգոց մեղրն այդ մատեանին մէջ ամփոփուած է: Պաշտելի՛ մատեան, անթառամ ծաղիկ. գանձ իմ, լոյս իմ, զբօսանք իմ, սփոփանք իմ - սրտիս վրայ կը պահեմ ես յաւէտ Ծաղկաքաղն»: Ավելորդ է ասել, որ այդ ժողովածուում հավաքված էին բոլոր ժամանակների ամենատարբեր ուղղության, ժանրի ու ճաշակի հետևող համաշխարհային գրականության լավագույն դեմքերն ու նրանց գործերը՝ «Հոմերոսէն մինչև Կեօթ Ողիմպիականն, Վիրգիլիոսէն մինչև Վիքտոր Իւկօ քնարերգակն, Տանդէն մինչև Հայնէ տարօրինակն, ու Դասսօ որ կ'երգէ Երուսաղեմ ազատեալն, ու Միլտօն որ կ'երգէ Դրախտ կորուսեալն. ու աղքատ Ժիլպեռն ու հիւանդ Միլվուան, ու յուսահա՛տ Լորտ Պայրընն, բոլոր քնարք, բոլոր նուագք - բոլոր անմահք - ժամադիր եղած են Ծաղկաքաղ հատուածքի մէջ...»:²

Ե. Տեմիրճիպաշյանը տարբեր առիթներով անդրադարձել է նաև Լամարտինի, Բալզակի, Հյուգոյի, Գյոթեի, գրական այլ մեծությունների անհատականության և ստեղծագործության բնորոշմանը: Ըստ այդմ Լամարտինը նրա համար «դարուս և ամեն դարուց ամենամեծ քնարերգակ», «անմահ» բանաստեղծն է:³ Վիկտոր Հյուգոյի մահվան կապակ-

1 Ե., «Նորայրեան բառարանի սխալները», Երկրագունտ, 1886, թիւ 8, էջ 365:

2 Տե՛ս Հ. Սիմեոն, Եղիա Տեմիրճիպաշեան..., էջ 153-154:

3 Ե., «Չարագացումն հայ մտաց և հայ լեզուի», Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 450:

ցույթայնությամբ եղիման բանաստեղծությունն է ձուլել նրան, գրական հանրությանը ծանոթացնելու նպատակով, թարգմանել է «Գրոմուլեյի նախաբանն»՝ ձուլելով «Թշվառներ»-ի թարգմանիչ, «բազմադիրք» գրագետին՝ Գրիգոր Զիլինկիրյանին: «Կատուի մը յիշագիրք»-ում, հեգնական – երգիծական ոճով ու ոճական այլ հնարաններով բացահայտել է մահկանացուն կնքած «այն ծերունի բանաստեղծի» մեծությունը, ում համար բժիշկները վկայում էին, թե «քառասուն տարու մարդու կազմ ունի»: Հյուգոյի մահով, սակայն, ըստ Կատուի «անսքող կարծիքի», «մեծ պատուհաս է մ'ալ ազատեցաւ մարդկութիւնն»: Քանզի՝ «ընդհանուր մարդկային ազգին պատուհասն էր, ընկերութեան բոլոր դասերուն ալ պատուհասն էր այդ «վսեմ մանուկն», որպէս երբեմն կոչուեցաւ իւր նախակարապետն՝ այն վսեմափառ Շադօպօիանէն»: Վ. Հյուգոյի՝ կեղծը, սուտն ու անարդարը ձաղկող գրական և հրապարակային սուր ելույթներից սոսկում էին իշխաններն ու ազնվականները, քահանաներն ու գրագետները /«անտարակոյս **դասական** գրագետը»/, քանզի «ոսկեղենիկ բանիւք պիտի յանդիմանէր բարձր կոչուած դասն», «պիտի ցուցնէր թէ **ինք հաւատացեալ մ'է՝ բառին բարձրագոյն նշանակութեամբ**, եւ թէ եպիսկոպոսն ինք է նանրահաւատ կամ անհաւատ», «զի իրենց յաւետ կամ նուազ ճաշակաւոր հասարակաբանութեանց վրայ հանճարաւոր ու շնչաւոր ու լուսաւոր հեղինակութիւններ պիտի նետէր Հիւկո՝ **Վիպականութեան** Գոթական ու Քորեփական բարձունքներէն»: Սոսկում էր մինչև անգամ ժողովուրդը՝ «զի **Թշուառներ** ու հեղինակն՝ ընկերային մարմնոյն վերքերն երեւան պիտի հանէր իր ահագին ջահովն, եւ անեծք եւ հայիոյանք եւ սպառնալիք պիտի խլէր հանէր ժողովրդեան հոգոյն խորերէն, խռովելով միանգամայն ազգաց եւ ազգապետաց անդորրութիւնն»:՝¹ Սակայն, ի վերջո, «ի՞նչ է Հիւկոյի յաջողութեան գաղտնիքն»... Պարզվում է՝ այդ հաջողության «երկու գլխավոր տարերքն եղան ժողովրդեան տգիտութիւնն եւ Նաբոլէոն Երրորդի ճարտարարուեստ բռնակալութիւնն»: Ապա Կատուն սկսում է քննադատել Վ. Հյուգոյին՝ նրան ավելի ցածր դասելով Բալզակից, Մյուսէից, Գյոթեից և այլ մեծերից, մեղադրելով միջակայան, հակասականության և այլ «մեղքերի» մեջ: Սակայն մի քանի էջ խլող այդ «քննադատականից» հետո, հանկարծ բացահայտվում է, որ դա մի գրական հնարք է՝ «տկար արծազանգ մը միայն /.../ ֆռնասական նոր գրական դպրոցին հզօրագոյն ձայներուն»:՝² Եվ Կատուն «բացում է» իր խաղաքարտերը՝ անկեղծ մեղայականով. «Արդ, մեղա՛յ կը գոչեմ. մեղա՛յ ձեզ, ընթերցողք իմ: Ես չեի՛, - աղերսում է նա: - /.../ Յետոս կը կոչե՛մ: Ես բո-

1 «Կատուի մը յիշագիրք» /Վիգոր Իւկօ/, ԳԻՇ, տետր վեցերորդ, էջ 107:

2 Նույն տեղում, էջ 111-112:

լորովին տիրոջս հետ համակարծիք եմ. ծայրէ ծայր ճշմարիտ է ինչ որ իր ոտանատրին մէջ գրեց Վիգորո իւկոյ վրայ»:¹ Իսկ Ե. Տեմիրճիպաշյանի այդ երկարաշունչ քերթվածում Վիկտոր Հյուգոն ներկայանում էր միանգամայն այլ կերպարով.

...Ո՛հ, իւր մատեա՛նքն. նոքա կազմեն նոր Սուրբ Գիրք.

Ինքն առանձին, այո՛, զըրեց նա Սուրբ Գիրք.

Յանհուն իւր գործ, եւ այլազան, ճոխ, խոր, բարձր,

Պատկերացուց զդարս, ըզդէպս, զդէմս, զերկնից քաղցր

Չամբա՛ւ նայուածս, ե՛ւս ըզխորոցն արհաւիրս.

Դատեց խըստիւ մեծաց ըզգործս, եւ ըզգիրս

Նա վերլուծեց իմաստնոց, Հարց, քերթողաց...

Ահա թե ինչու, Եղիան հորդորում էր նաև հայրությանը՝ աղոթելու, ծնրադրելու՝ «վասն այն անմահ հանգուցելոյն», քանզի՝

Մեր բարերարն էր, եւ համայն մարդկութեան

Եցոյց Հիւկո բարոյն օրինեա՛լ պողոտան...²

Բայց այս ամենը մի՞թե չէր կարելի հասցեագրել նաև հենց իրեն՝ Եղիա Տեմիրճիպաշյանին: Տպավորությունն այնպիսին է, որ Վիկտոր Հյուգոյի առիթով Եղիան պատասխանում էր նաև ի՛ր ընդդիմախոսներին, քանզի, իրոք, մի՞թե նաև իրեն չէին ուղղված ժամանակի «վայ քննադատներից» շատերի այն մեղադրանքները, թե «Վիգորո իւկոն՝ եթէ լաւ քննենք՝ սովորականէն դուրս բան մ'ըրած չէ՝ բաց յանձնագովութենէ», որի գրվածքներում կարելի է տեսնել «գաղափարի տեղ պատկեր, եւ պատկերի տեղ բառ. գոյականն ածական եղած, ածականն ալ գոյական», «խօսք առանց բայի», «պարբերութիւնը անվերլուծելի, թէեւ փողփողմամբ լի»: Ապա նաև՝ «իմաստասիրի յաւակնութի՛ն, ու պառաւ կնկան խորհրդածութի՛ն. ամեն քայլափոխի հակասութիւն, ամեն գրուածի մէջ ճաշակի պակասութիւն», «հաւատք քնարին ծայրն, երկբայութիւն հոգւոյն խորն», «գեղեցկագիտական քարոզութիւն ու տգեղութեան ջատագովութիւն»...³ Եվ եթէ դա ճիշտ է, ուրեմն Վիկտոր Հյուգոյի անձին և Գործին տրված հետագա գնահատականները հավասարապես վերաբերելի են նաև Եղիա Տեմիրճիպաշյանին: Այսինքն, թե իր ժամանակի այլ տաղանդավոր գրողների /Լկոնտ դը Լիլ, Բանվիլ, Բուրժե ևս/ համեմատությամբ, «բանաստեղծն Հիւկոն է. Հիւկո շունչ ունի, ներշնչում ունի: Հանգ ունի Լը Գոնդ տը Լիլ. եւ անտարակոյս արուեստական անսպառ հանք ունի: Սակայն Վիգորո իւկոյի հանքն իւր հոգւոյն մէջ է, կամ ըն-

1 Նոյն տեղում, էջ 114:

2 **Տեմիրճիպաշեան Ե.**, «Վիգորո իւկո», ԳԻԾ, 1885, տետր 2, էջ 97-100:

3 «Կատուի մը յիշագիրք» /Վիգորո իւկո/, էջ 109-110:

թերցո՛ղ, քու հոգւոյդ մէջ. թերեւս ոչինչ զգացած է քերթողն. այլ դու կը զգաս, կու լաս, կը վերասլանաս տեսականի բնագաւառներն, նոր մարդ կ'ըլլաս դու, կը սիրես բանաստեղծն եւ կը սիրես երկիրն եւ երկինքն: Պանվիյ, Պուռժէ, գոհարներ իրարու քով կը շարեն. Մորիս Ռօլինա կրնայ հիւանդացնել ըզբեզ. Սիւլի Բռիւտօմ ըզբեզ կարօղ է մարմարի՝ փոխարկել. Հիւկօն է որ ի մարգարիտ ու յադամանդ փոխարկուած զգացման դաշնակագոյն կոհակներ իրարու քով կը շարէ կամ միմեանց ետեւէ շող ի շող կը յորդէ ու կը յաջորդեցնէ. **Հիւկօն է որ ըզբեզ կը բժշկէ, կը կենդանացնէ, կը վսեմացնէ.** Հիւկօն է որ ըզբեզ ի քնար փոխարկելու կարօղ է. Հիւկօն է հանրութեան բանաստեղծն, Հիւկօն՝ մարդկութեան բանաստեղծն, Հիւկօն՝ տիեզերական բանաստեղծն. ամէ՛ն»:¹

Ինչ վերաբերում է ազգային գրականութեանը, ապա ավագ սերնդի «գրական երրեակ ամենամեծ» դէմքերի /Ալիշան, Այտնյան, Մամուրյան/ կողքին, Եղիա Տեմիրճիպաշյանի համար իրենց առանձնահատուկ տեղն ունեին նաև Մկրտիչ Պէշկիթաշյանն ու Հակոբ Պարոնյանը: Ասիական ընկերության լսարանի հանդեսներից մեկում արտասանած իր ճառում նա խոստովանում է, թէ «Երբ գրասեղանիս առջեւ կը նստիմ նկարագրելու համար հանդէս մը՝ որպիսի էր Ապրիլ երեքին ի Բերա Յունական Բանասրահին մէջ տեղի ունեցած հանդէսն, ո՛հ, կը փնտռեմ շուրջս Պէշկիթաշլեանը...: Կը փնտռեմ Մկրտիչ Պէշկիթաշլեանի Մատենագրութիւնքն, որպէս զի ներշնչուիմ յայնցանէ, որպէս զի յօդուածոյս բնաբան ղնեմ իւր մէկ տաղը կամ իւր մէկ բանն»: Եվ դա հիմնավորում էր նրանով, որ «**Պէշկիթաշլեան ա՛յն բանաստեղծն է, որոյ քնարին ձայնիւ կը միանային այլևայլ հատուածք Հայոց ազգութեան**, որոյ հիւծեալ հիացեալ կերպարանացն ընդմէջէն կ'ընդնշմարէինք անդրաշխարհեան անճառ սքանչելիքներն, և, դրդեալ հոգեկան հաղորդակցութեան պէտք մը որ այդպիսի վայրկեաններու մէջ կը ծնանի բնականաբար, յանգգայս իրարու ձեռք կուտայինք. «Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբա՛յր»: Ահա այդ օրն էլ, հիշյալ հանդէսի մէջ փնտրել է «աւետարանական սկզբանց կամ աւետարանական զգացմանց բանաստեղծն՝ որ կը ծաւալէր իւր բանից յոյսն իմացականութեան տօներու պայծառ մթնոլորտին մէջ՝ պայծառագոյն ևս գործելով զայն»: Եվ ահա, արդէն իր մենարանում, փնտրում է բանաստեղծի «Մատենագրութեանց նուիրական հատորն, որ կերպիւ իւր իննետասներորդ դարու Աւետարանն է Հայոց»: Փնտրում և, ավա՛ր, չի գտնում արդէն «հազուագիւտ եղած» այդ հատորը: Սակայն չի հուսահատվում, քանզի խոստովանում է՝ **«կը զգամ բանաստեղծին ոգին»:**²

1 Նույն տեղում, էջ 114-115:

2 Ե., «Լսարան Ասիական ընկերության», Երկրագուևտ, 1888, թիւ 3-4, էջ 97-98:

Հակոբ Պարոնյանին Ե. Տեմիրճիպաշյանը «մեծանուն երգիծաբան» է համարում, ով «միշտ իր գրչին տներն է»: Եվ, սակայն, ըստ նրա, «թերեւս ոչ ոք այն մեծ Ծիծաղօղին չափ զմարդ կը տրտմեցնէ»: Եղիայի գնահատությամբ, Հ. Պարոնյանի «երկասիրութիւնը հայելին են մեր ընկերութեան, եւ եթէ մեր ընկերութիւնն յաւետ աւելի գեղազարդ կ'երեւի այդ հայելիին մէջ, յաւետ աւելի գեղեցիկ չ'երեւիր հոն, աւա՛ղ...»:¹

Պատահական չէ նաև, որ Ե. Տեմիրճիպաշյանն իր և Նոր եկող սերնդի գրական քննությունն սկսում է հայ բանաստեղծության զարգացման տվյալ փուլի գնահատությունից: Ըստ այդմ իր բերկրանքն արտահայտելով մեկ տարվա ընթացքում «երրեակ քերթողական հատորների» լույս աշխարհ գալու կապակցությամբ, նկատում է, թե «Մեր նիւթավար ժամանակին արծակունակ /prosaïque/ ոգւոյն հետ անհամաձայն կը թուի սոյն բանաստեղծական վերագարթնումն»: Բայց մի՞թե դա այդպէս էր: Ըստ Եղիայի՝ ամենևին, որովհետև «Գրականութիւնն՝ նման գեղարուեստից՝ այլեւայլ շրջաններէ կ'անցնի յընթացս իւր զարգացման» և կարող է պատահել, որ Նույնիսկ այդ «այլեւայլ շրջանաց միջեւ կամ շրջանաց մէջտեղ իսկ խաւարի, իբր ընդհատի»: Այդ երևույթը, նրա կարծիքով, բնորոշ էր նաև արդի հայ բանաստեղծությանը, երբ մի շարք հեղինակներ սովոր ժողովածուներ լույս ընծայելուց հետո, «ոչ միայն այլ եւս չիրատարակեցին, այլ եւ «քնարն իսկ թողուցին» իրենցմէ մեծագոյններուն միոյն բացատրութեամբ»: Միայն Թովմաս Թերզյանն ու նրա սերնդակից Մկրտիչ Աճեմյանն էին, որ իրենց Նոր քերթվածներով «մերթ ընդ մերթ» երևում էին գրական ասպարեզում: Ընդ որում առաջինը, որովհետև «ի Մուսայից յաւետ կը փայփայուի յաւերժական իւր երիտասարդութեան համար», իսկ երկրորդը, որովհետև «մանկական շնորհ մը՝ որ Աճեմեանի երկնաշնորհ ծիրքն է՝ կուգայ իր մատաղ անդամոց դողդոջիւնն յածել քնարին վրայ»: Մանավանդ նրա «Լոյս եւ Ստուերք» ժողովածուն վերոհիշյալ երեք հատորներից մեկն էր: Ամիսներ առաջ «Երկրագունտ»-ում ընթերցողներին ներկայացնելով այդ հատորը, Եղիան Մկրտիչ Աճեմյանի մասին գրում էր, որ նրա «նախորդ բանաստեղծական երկասիրութիւնը մեր գրատան պատուոյ յարկաց վրայ գետեղուած են: Սրտաբուլիս, սահուն ու սրտառուլ են՝ որպէս նախորդ հաւաքածոյից՝ Նոյնպէս **Լոյս եւ Ստուերք** ի տաղերն ալ»:² Այնուամենայնիվ, չնայած մի շարք արժանիքներին, Եղիան տեղատվության որոշակի երանգներ էր տեսնում այդ գրքում՝ «Լոյսն որ կ'ողողէ բանաստեղծին նախորդ հատորներն,- գրում է նա,- Նուազ արշալոյս քան վերջալոյս է սոյն հատորին մէջ, ուր մուսայն՝

1 **Խմբ.**, «Նոր իրաւարարականք», Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 542:

2 Նույն տեղում, էջ 542:

երեկոյան սարսուռներուն ներքեւ՝ տոժոյն ու կծկեալ է, եւ արտեւանունքն արդէն կը ծանրանան...»:

Հաջորդ՝ «Յուզման ժամեր» ժողովածուի հեղինակն արդէն «Նոր սերնդեան հզօրագոյն բանաստեղծներէն մին» էր՝ Հովհաննէս Սեթյանը, ում «հոգւոյն եւ իւր հանճարին» մասին մինչ այդ բազմիցս խոսել էր Եղիան և այդ ժողովածուն ևս ներկայացրել «Երկրագունտ»-ում:¹ Հովհաննէս Սեթյանը, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, «վիպական դպրոցին կը վերաբերի հաստատապէս, ահա թէ ինչու նրա մտահոգութեան առարկան բնութիւնը չէ «իր ամեն երեւոյթից ներքեւ եւ իր ներքին կազմութեան ու կազմալուծութեան մէջ, այլ բնութեան փայլուն կամ մթին մէկ երեսն»: Վերլուծելով հատորն ամբողջութեան մէջ, Եղիան նաև անկեղծորէն արտահայտում է իր իղծը կամ տեսակետը Հ. Սեթյանի բանաստեղծութեան զարգացման վերաբերյալ, ըստ որի կտենչար, որ նա «լար մը եւս յաւելլոր իւր բարձրաւիշ բանդան, /.../ կամ թէ ծովէր բոլոր լարերն իր քնարին՝ ի մի միակ լար յոգնածայն յոգներանգ համադրական...», քայլելով «այս մեր լուծման դարուն» համընթաց, վերլուծեր բնութիւնն «իւր անհուն ընդարձակութեան» և բազմազանութեան, մարդկութեան հետ «յոգնադիմի յոգնախորհուրդ հաղորդակցութեանց մէջ»:² Այսինքն՝ բնութիւնն ու մարդկութիւնը նկարագրեր նաև «իրենց գոեհիկ կերպարանաց մէջ, իրենց զարշելի արտայայտութեանց մէջ, իրենց մծղէ տենդերուն մէջ...»: Բնութեան և մարդկութեան այս «հսկայ հոլովամասնեայ յաւիտենական պայքարն», Ե. Տեմիրճիպաշյանի համոզմամբ, որ արդիւնք է նյութի անբաժանելի հատկութիւնը հանդիսացող շարժման, «մեծ բանաստեղծին գործոյն մէջ պարտի պատկերանալ իր ամեն փոփոխութեամբք, իր փոքրոգի ճգանց եւ իր դիցազնական շարժմանց մէջ, իր յոգնահոծ ստուերց մտատանջիկ մակընթացութեանց եւ իր փողփողենէջ արշաւանաց բովանդակ պայծառութեան ու վսեմութեան մէջ»: Այս ամենն ասելուց հետո, Եղիան հարկ է համարում մեկ անգամ ևս ընդգծել, թէ «**Միաւասիկ ինչ որ պարտի Նոր բանաստեղծին, մեծ բանաստեղծին երգոց նիւթ ըլլալ**»:

Ակնհայտ է, որ հարցադրումների այս շղթայի մէջ Ե. Տեմիրճիպաշյանն արտահայտում էր ոչ միայն **հայ Նոր բանաստեղծութեան իր տեսլականը**, այլև բանաստեղծի մեծութեան իր չափանիշը՝ իհարկէ, այդ ամենում չմոռանալով նաև **Նիւթնայի** պարագան: Նշելով, որ Հովհ. Սեթյանը՝ այլ արժանիքների հետ, ոչ միայն ունի նաև «բնագոյներ ազ-

1 Ե., «Յովհաննէս Սեթեան. Յուզման ժամեր /Զերթուածք/, Երկրագունտ, 1888, թիւ 6, էջ 275-276:

2 Ե., «Սփոփանք ռամկին», էջ 471:

նուական, տեսութիւններ վերացական», ավելին՝ «ներքնատեսութեան, ներքնակեցութեան առանձնաշնորհն ունի թերեւս առաւել քան ոչ գործ», հաստատում է, թէ «գորութիւն ու լայն թեւեր ալ ունի ընդգրկելու համար կենաց տիեզերական պայքարին բոլոր համեմատութիւններն», ինչի լավագոյն վկայութիւնը տվել է իր «Նիրվանա» քերթվածում:¹

Երրորդ հատորը Միհրան Հովհաննիսյանի «Սփոփանք ռամկին» ժողովածուն էր: «Պատիւ ունենալով անձնապէս ճանաչել կրկին բանաստեղծներն,- գրում է Եղիան,- նոյնքան ազնուական ու նոյնքան վերացական գտած եմ երկուքն ալ...»: Տարբերությունը, սակայն, այն էր, որ «առաւել երազող» էր Հովի. Սեթյանը, որն այդ պատճառով «տակաւ կը կորուսանէ՝ իրականութեան զգացումն», մինչդէռ Մ. Հովհաննիսյանի պարագայում «երազողն ապրօղին տակ կը թաքչի, հսկելով եւ սպասելով...»: Վերջինս իր խառնվածքով իսկ ավելի կյանքային է, չի կտրվում իրականությունից, այնպէս որ «չես խռովիր իր ներկայութենէն, իր խօսակցութենէն. յստակ անձնաւորութիւն մ'է, պայծառորոշ գիծերով, կանոնաւոր շարժամբք, ամփոփ խօսակցութեամբ, եւ իր նոյնքան թխաթոյր աչաց մէջ կ'ընթերցուի քան կ'երագուի կեանքն»:² Հատկանշական է նաև, որ երկու բանաստեղծների ստեղծագործության միջև նկատվող տարբերությունները Եղիան պատճառաբանում էր նաև «ժամանակաց տարբերութեան ու գրական դաստիարակութեան» հանգամանքներով: Ըստ այդմ վճռորոշ էր համարում, որ «Երբ Սեթեան սկսաւ տաղել, Հիւկոյին ի Հայս ազդեցութեան պայծառագոյն ժամանակն էր /իմա՝ վիպապաշտության - Պ.Դ./», մինչ «Միհրան Յովհաննեսեան կ'երեւի 1888ին, երբ Հայ գրականութիւնն նոր հոսանքէ մը /իմա՝ իրապաշտության - Պ.Դ./ կը մղուի»:³

Իր «Շարժում»-ի էջերում ընթերցողներին ներկայացնելով «նորատիպ» գրական գործերը, Ե. Տեմիրճիպաշյանը նախ ընդգծում էր դրանց արժանիքները՝ թե՛ բովանդակության, գաղափարի և թե՛ ձևի ու ոճի տեսակետից, ապա նաև տեղը գրական ընթացքի մէջ: Այդ առումով նա բարձր է գնահատում Չմյուռնիայի «Ծաղիկ» հանդեսի նախկին խմբագիր Գրիգոր Զիլինկիրյանի «Ուղեւորութիւն ի Պօլիս» երկը, որը հանձնարարում էր ընթերցել, քանզի «հեղինակն ազգային գործոց եւ ընկերային խնդրոց մեծ հմտութիւն մը կը միացնէ վառվռուն ու բեղուն երեւակայութիւն, փայլուն ոճ եւ սահուն լեզու»: Այդ հատկանիշների շնորհիվ է, որ, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, Գր. Զիլինկիրյանի «Ուղեւորութիւն»-ը մի գիրք

1 Նույն տեղում, էջ 472-473:

2 Նույն տեղում, էջ 473:

3 Նույն տեղում, էջ 474:

Է, «ոյր նմանն հագիւ հինգ-տաս տարին անգամ մը կ'երեւի մեր Նոր ու ջքաւոր գրականութեան մէջ»:¹

Եղիա Տեմիրճիպաշյանն առաջիններից մէկն էր, որ նկատելի ու ճանապարհ է հարթել երիտասարդ Եղիշէ Դուրյանի գրական տաղանդի դրսևորման համար: «Երկրագունտ»-ում գետեղելով Կ.Պոլսի հայոց «արժանընտիր» պատրիարք Հարություն Վեհապետյանին նվիրված նրա քերթվածը, իր վերջաբան խոսքում Եղիան հիշատակում է նաև Եղիշէի ավագ եղբորը՝ Պետրոս Դուրյանին, ակնարկելով գրական ծիրքի ժառանգականության մասին: «Մեր ընթերցողը սիրտ ի թունդ Դուրեան անունն Հանդիսիս էջերուն մէջ պիտի տեսնեն բանաստեղծութեան մը ներքեւ, գրում է նա: - Միթէ յարութի՞նն առաւ բիրիցս ողբացեալ այն բանաստեղծն, որ՝ քսանամեայ մահանալով՝ անմահ երկ մը թողուց, - հրաշո՛ւնչ հատոր մը կենսալիւր, հառաչալիւր, հանճարալիւր երգոց ու թատերգութեանց»: Ապա, ըստ Եղբայան, հաստատելով հարության իրողությունը, գտնում է, որ ի դեմս Եղիշէ վարդապետ Դուրյանի, «առաջնակարգ բանաստեղծ մը կը յայտնուի վերագրեալ երգոյն մէջ, Նոր՝ յղացմամբ ու գողտը՝ արտայայտութեամբ»: Ահա թէ ինչու, վստահ էր, որ «Երկրագունտ այսուհետեւ պիտի վայելէ երիտասարդ այլ մեծահմուտ ու մեծատաղանդ եկեղեցականին աշխատակցութիւն»:²

80-ական թվականների կեսերին Եղիա Տեմիրճիպաշյանի քննադատական հայացքը գրական ընթացքի մեջ արձանագրում էր **ժանրային լուրջ տեղաշարժեր**, մասնավորապես, ընդգծելով «վիպականական ձեւի» զարգացումը: Սրբուհի Տյուսաբի «Սիրանոյշ» վեպի առիթով նա նկատում է, թէ «**վիպականական ձեւն**, ում կը յանգին եւ ուր կը հաստատուին այսօր ընդհանրապես Եւրոպացի գրագետը՝ գրական յօդուածոց ու քերթողական հատուածոց շարք մ'իբրեւ առաջին փորձ ի լոյս ընծայելէ յետոյ, **Հայ գրագիտաց ալ նախասիրական ձեւն ահա կը սկսի դառնալ**»:³ Ավելի ուշ, «Երկրագունտ»-ի ընթերցողներին ուղղված խոսքում Ե. Տեմիրճիպաշյանը հաստատում էր, թէ «վեպն այսօր գրական սիրելագոյն սեռն է», ահա թէ ինչու, ընդառաջելով ընթերցողների ցանկությանն ու հանդէր «ժողովրդական դասուց աւելի մատչելի ու սիրելի» դարձնելու նպատակով, խոստանում էր «յառաջիկայ տարեգլուխէն սկսեալ» հրատարակել նաև «բարոյական հրահանգիչ վեպեր»:⁴ Եվ, ահա, շատ չանցած, «Երկրագունտ»-ի էջերում /1888, թիւ 5/ հայտնվում է Նուրանիայի

1 «Մատենախօսական», ԳԻԾ, 1884, տետր եօթերորդ, էջ 140:

2 Երկրագունտ, 1885, թիւ 5, էջ 236:

3 «Սիրանոյշ», ԳԻԾ, 1885, տետր եօթերորդ, էջ 117:

4 «Առ ընթերցողս», Երկրագունտ, 1887, թիւ 11-12, էջ 544:

«Պուտտային ազդեցութիւնն»՝ փակագծերում «Իմաստասիրական վէպ» ժանրային բնորոշմամբ: Խնդրին անդրադառնում է նաև Կատուն իր «Յիշագիրք»-ում: «Արդեօք մեր առած կրթութեան, մեր առած դաստիարակութեան արդիւնք չէ՞ որ ծանուցեալ գրագետը ոմանք վէպերուն համար կ'ըսեն. «Մամիկս ալ կրնայ գրել», զարմանում է Կատուն: Ընդունելով, որ «բարուց վրայ» վէպերի «յոռի ազդեցութիւնը» քննության կարոտ խնդիր է, նա որոշ գրագետների «հակասական ընթացքի» պատճառը շատ պարզ էր համարում: Ըստ այդմ «Գրագետ մը, որ վէպ գրած չէ եւ որ բարձր դաստիարակութիւն ստացած չէ կամ հոգւոյ բարձրութիւն չունի ի բնէ, վէպը գրական սեռերէն արտաքսելու չափ յառաջ /կամ ետ/ կ'երթայ...»:¹

Հովսեփ Ծիշմանյանի մահվան կապակցությամբ ևս Եղիան ընդգծում էր, որ թեև ինքն անձամբ քիչ անգամ է տեսել Նրան, բայց նա հաճախակի էր երևում գրական ասպարեզում և վերջինիս «գլխաւոր գործերն՝ իր պատմական վիպասանութիւնք են, որոնց վրայ կը դնէր **Ծերենց** ստանունն»: Հանդեսներում և թերթերում տպագրված նրա հոդվածները «մեծ հմտութիւն, աշխոյժ, նրբամտութիւն կը յայտնէին, փայլուն ոճ մ'ունէր: Բանախօսութեանց մէջ գիտունն, ուղևորը, գրագետն ու հայրենասէրը ձեռք ձեռքի կուտային: Իսկ իր ճառերով կը յուզէր ու կը հմայէր Տօթքօռ Ծիշմանեան»: Նա նշում է, որ իր հիշողության մեջ հատկապես տպավորվել է Ծերենցի դամբանական ճառը Պեշիկթաշլյանի մահվան օրերին, որն ինքը կարդացել է Նույնիսկ «դպրոցի գրասեղաններու վրայ»՝ եվրոպական մատենագրության «ամենագեղեցիկ գործերի» հետ միասին: «Բոլոր Հայ երիտասարդութիւնն ալ Նոյն տպաւորութիւնը կրեց յայնժամ», խոստովանում է նա:²

Գրական նշված ընթացքի օբյեկտիվ բնույթն ընդգծելու համար, Եղիան բերում է իր ու Արփի. Արփիարյանի հետ կապված պատմության օրինակը, ըստ որի վերջինս, որ երկար տարիներ միայն թղթակցություններ էր գրում «Տփղիսի **Մշակ** ին մէջ» և ոչ միայն քննադատում էր Եղիային՝ հոդված, ատենաբանություն, նորավէպ գրելու համար, այլև հորդորում էր «թողո՛ւ քնարն», սկսել էր ինքը նորավէպ գրել, որոնցից մեկը՝ «Մասիս» շաբաթաթերթում անստորագիր հրատարակված «Կատակ»-ը, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, վերջին տարիներին «Հայ լեզուաւ եղած գրական արտադրութեանց լաւագոյններէն, գեղեցկագոյններէն» մեկն էր: Հաջորդ ապացույցը տվել էր Գիգոր Չոհրապը, որ «քանի մը տաղեր ու քանի մը յօդուածներ գրելէ յետոյ», «Երկրագունտ»-ում սկսել

1 «Կատունի մը յիշագիրք», Երկրագունտ, 1888, թիւ 11, էջ 495:

2 «Տօթքօռ Ծիշմանեան», Երկրագունտ, 1888, թիւ 1-2, էջ 54:

Եր հրատարակել «կարի հետաքրքրաշարժ ու նորապատկեր վեպ մը՝ **Մսհետացած սերունդ մը** մակագրով»: Բացի այդ, շուտով նույն հանդեսում տպագրվելու էր նաև Հովհաննես Թյույսուզյանի «մեկ գիտական նորավեպն»: Այդ ամենի մեջ Եղիային առավել սրտամոտը Արփի Արփիարյանի «Կատակ»-ն էր: Երբ այն կարդացել էր «Արեւելք»-ի գրասենյակում, հեղինակի ներկայությամբ, խոստովանում է, որ «տակալին ջնջուած չէ սրտիս վրայն **Կատակ** ին տպաւորութիւն»: «Ի բաց ամեալ լեզուին ներդաշնակութիւնն եւ ոճոյն փայլն», իրեն թվացել է, թէ Մյուսէ է ընթերցում հայերեն, ավելի ճիշտ՝ Կատակ չըլլուիր սիրոյ հետն /On ne badine pas avec l'amour/»:¹ Ինչ վերաբերում է Գր. Չոհրապին, ապա խոստովանում է, որ չի կարող գուշակել, թէ «իւր ամբողջութեան մէջ **Մսհետացած սերունդ** ն ի՞նչ պիտ'ըլլայ», սակայն արդեն ուներ իր որոշակի կարծիքը երիտասարդ արձակագրի գրական ծիրքի մասին: Նա համոզված էր, որ «սրաչուի, սրամիտ, գրական դաստիարակութիւն ընդունած, այլեւ իւր բանաստեղծական բարեխառնութեամբ թռչնոց ու թիթռանց ետեւէն վազելով հաւետ ուղիղ ճանապարհէն խոտորելու եւ մոլորելու կոչուած, արագ եւ առատ խօսող, արագ եւ առատ գրող, կենաց եւ եղբանց յար ետեւի կողմն որոնող, **Պարոն Չոհրապ կոչուած է թերեւս Հայոց Չօլան ըլլալ**»: Եվ որպէսզի իր այս գնահատականը լիովին հասկանալի լինի բոլոր ընթերցողներին, Եղիան հարկ է համարում ավելի մանրամասնել իր խոսքը, այսինքն՝ շարունակում է նա՝ «լուսանկարել կեանքն, իրեն իրենց անուամբ կոչել, առ ոչինչ գրել պատշաճութիւնն յամենայնի, ռամիկ տարրին յաղթահարել տալ ոստանիկ տարերց վրայ, մերկութիւնն նկարագրել այնքան խղճմտութեամբ որքան այլք փոյթ ունին քողարկելու զայն», եզրափակելով, թէ «այս է Պարոն Չոհրապին ալ յատկանիշն»: Սակայն դա չէր նշանակում, որ նա քննադատելի ոչինչ չէր տեսնում այդ հեղինակի գրվածքներում: Նշում է, օրինակ, որոշ բնապաշտական /իմա՝ նատուրալիստական – Պ. Դ./ հատվածների գոյությունը, որը, կարծում էր, «երիտասարդ վիպասանին յաճախ տաղտուկներ պիտ'առթէ»: Ու խոստովանում է, թէ «Պարոն Չոհրապ յոյժ նեղացաւ երբ՝ պաշտօնիս պահանջմամբ եւ խղճիս հակառակ՝ մեղմացուցի **Երկրագունտ** ի մէջ իւր վեպին ինչ ինչ բառերն ու պարբերութիւններն»: Թյուրիմացություններից խուսափելու համար էլ ավելացնում է, թէ «իւր յատուկ խնդրանաց վրայ կը յայտնեմ զայս, խորիստ եղբայրակցիս ջերմապէս խնդակցելով այս առթիւ իւր հեշտ տաղանդին ու հարուստ շտեմարանին համար»:²

Ե. Տեմիրճիպաշյանն ուրախալի էր համարում նաև կին գրագետներ-

1 «Սիրանոյշ» ..., էջ 118:

2 Նույն տեղում, էջ 119:

րի ի հայտ գալու իրողությունը: «Սակայն արք չեն միայն, որք կը մատենադրեն» փաստում է նա: Եվ դեռ ավելին՝ ոչ միայն ստեղծագործում, այլև կանայք ևս «վիպասանական ծեն» էին ընտրում «իրենց մտածմանց եւ զգացմանց արտայայտության համար»: Նա գոհունակությամբ է նշում, որ «օրիորդ մը» պատիվ էր արել իրեն՝ ուղարկելով իր երկի ծեռագիրը, որը, սակայն, Եղիայի քննադատող անաչառ հայացքով, «եթե Պուլսի ծանօթ պատուհանին անսալով վերստին գրուէր՝ սքանչելի գործ մը պիտուլար»: «Մենիկ մելամաղծոտ անուան տակ» տիկին Մելիք-Ազարյանը /իմա՝ Ծերենցի դուստրը -Պ.Դ./ «Արեւելեան Մամուլ»-ում հրատարակել էր «փոքր ընտիր բարոյական վէպ մը», իսկ, ահա, «այն Տիկին մը՝ մեծ գերդաստանի շառաւիղ, մեծ դրից ու մեծ անուան տեր, մեծամեծ ծրիւք օժտեալ եւ ամենամեծ ճակատագրի կոչեցեալ» Սրբուհի Տյուսաբը, լույս էր ընծայել «Մայտա» վէպը՝ «մատենան մը տարօրինակ անուամբ, եւ՝ ըստ ոմանց՝ տարօրինակ յաւակնութեամբ»: Մի երկ, որը Եղիայի խոստովանությամբ, արդեն իսկ մեծ աղմուկ էր հարուցել ոչ միայն գրական հանրության մեջ, այլև «վեր ի վայր ընելու կոչուած էր այդ գործն ըզ Հայ ընկերութիւն»:

Կարևոր է նշել, որ Ե. Տեմիրճիպաշյանը Ս. Տյուսաբի այդ երկի ծնունդը ոչ թե պատահական, այլ գրողի անցած մարդկային, ազգային-հասարակական, գրական ճանապարհի տրամաբանական արդյունքն էր համարում: «Այդ կինն՝ անմեղ աներկրային էակ մը նկատուած էր նախ,- գրում է նա,- ազգային քերթողին՝ աւաղելի՝ Պէշիկթաշլեանին ներշնչող ոգին ու պահապան հրեշտակն եղած էր. ինքն ալ քերթուհի, որ մեծահաստոր անտիպ տաղարան մ'ունէր...»: Նաև հայերեն ու ֆրանսերեն լուրջ հոգվածներ էր հրատարակել, Բերայի բանաստեղծի մեջ՝ Պուլսի «ընտրագոյն ընկերութեան» ներկայությամբ, փայլուն բանախոսություն էր արտասանել հայ մատենագրության վերաբերյալ: Այդ ամենից հետո, «քայլ մ'ալյառաջ երթալով՝ այդ կինն ի՞նչ պիտ'ըներ,- հարցնում է Եղիան, - Հայ իգական սեռի դաստիարակության գլո՞ւխ պիտ'անցներ. զայդ ըրած էր: Ապա ուրեմն Հայ իգական սեռի դաստիարակության վրայ դասական մեծ մատենան մը պիտի գրէր իբրեւ լրումն, իբրեւ պսակումն իւր գործոյն. զայդ ահա Տիկին Սրբուհի Տյուսաբէ կ'ակնկալէր Հայ ազգն»: Սակայն, «մինչ ազգն համայն այդ քաղցր ակնկալութեամբ կ'որորուէր բերկրագին, Պէշիկթաշլեանի Մուսայն հեռո՞ւ հեռո՞ւ սլացած էր, Պալքաններն եւ Ալպեաններն անցած էր, խորհրդաւոր դրեկին շուրջ կը դեգերէր եւ դրեկին անմահ բնակուհոյն ստուերին հետ կը խօսակցէր»: Դոյակի «անմահ բնակուհին» ժողով Սանդն էր: Պատահական չէր, որ «երբ

Մայտա ն երեւցաւ,- վկայում է եղիան,- հարցուցին շատեր, թէ ժոռժ Սանէ՛ն թարգմանուած էր, թէ **Էնտիանա** ի ու **Լեյիա** ի հեղինակին մէկ անտիպ գո՞րծն էր», քանզի «ա՛յնքան փայլ ուներ այդ վիպասանութիւնն եւ ա՛յնքան բարձր իմաստասիրական եւ ընկերական յաւակնութիւն՝ սկսեալ յառաջարանէն»:

Հավակնությունն առնչվում էր կնոջ ազատագրության խնդրին: «Ցայն օր կանայք ուսած էին թէ պարտիք ունին,- մեկնաբանում է եղիան,- **Մայտա** կը գոչեր Հայ կնոջ. «Պարտիք ունիս, Հայ կին, այլ մանաւանդ իրաւունք»: Իրաւունք ինչի՞. - լուսոյ, սիրոյ, կենաց՝ ի մի բառ»: Բանն այն էր, սակայն, որ նրա կարծիքով Ս. Տոլստայի վեպերի բուն նշանակությունը կայանում էր ոչ թէ գաղափարական, իմաստասիրական, այլ գեղագիտական բովանդակության մեջ: Ե. Տեմիրճիպաշյանի համոզմամբ, հայ կինն այդ իրավունքները ձեռք էր բերել մինչև «Մայտա»-ի լույս աշխարհ գալը և «գայնս արդէն ի գործ կը դնէր, /.../ Եւրոպական ընկերութեան օրինակաւ»: Հետևապէս, «Մայտա եւ Սիրանոյշ, երկու հարազատ քոյրեր,- իրենց հեղինակուհին յաւակնութիւն ա՛լ ունենայ շրջելու կամ շինելու, քանդելու կամ կանգնելու, - ոչինչ կ'ընեն բայց եթէ պատկերացնէ, բայց եթէ գործն ի գիր թարգմանէ, եւ արծակե՛լ գրուած մ'որ ի գործ պիտի թարգմանուի...»:¹

Գրական ընթացքի մեջ եղիա Տեմիրճիպաշյանին մտահոգող խնդիրներից մեկն էլ ժողովրդի, հասարակության ժամանակակից կյանքի, պատմության ներկա փուլի բազմակողմանի ու ճշմարիտ արտացոլումն էր: Այստեղ ևս շատ բան նրան չէր բավարարում: «Պատմութիւնն այն գրական ճիւղն եւ կամ սեռն է, որ ի մեր նախնեաց ամենէն աւելի մշակուած է», գրում է նա: Մինչդեռ՝ «մեր օրերն՝ ընդհակառակն՝ այդ սեռն ամենէն աւելի լքեալ, անտեսեալ է - հին թէ՛ նոր ժամանակաց համար»: Չընդունելով այն առարկությունը, թէ ժողովրդի ներկա պատմությունը, նույնիսկ «օր առ օր» գրվել և գրվում է օրաթերթերում, նա համոզված էր, որ այդ ամենը «չեն կրնար պատմական մատենագրութիւն մը կազմել», նախ՝ որովհետև օրաթերթերն անցողիկ են՝ «անտառաց թերթերուն նման՝ սահմանեալ են կորստեան», և ապա՝ մեծ մասամբ չեն գրվում «գրագիտաց ձեռօք», այլևս չխոսելով զանազան «կրից կամ այլ անորակելի՛ ազդեցութեանց ներքեւ» գրված լինելու, դեպքերը խեղաթյուրված ներկայացնելու հանգամանքները: Ահա թէ ինչու, օրաթերթային հրապարակումները «չեն կրնար ծառայել՝ ո՛չ իբրեւ աղբիւր ո՛չ իբրեւ հրահանգ եւ ո՛չ իբրեւ հեղինակութիւն»: Այսինքն՝ Ե. Տեմիրճիպաշյանի կարծիքով, ժողովրդի ներկա կյանքի ճշմարտացի պատկերը կարող են տալ

1 Նույն տեղում, էջ 120-122:

միայն գրական որոշակի ծիրքով օժտված գրագետների՝ «թե՛ւ ոչ պատմագրի յաւակնութեամբ ու կարգաւորութեամբ գրուած, սակայն ժամանակակից պատմութեան վրայ լոյս սփռելու եւ հրահանգիչ ընթերցմունք ըլլալու սահմանուած» գործերը: Իսկ որպէս այդպիսին, նշված չափանիշներին համապատասխանող երկերը, ըստ Եղիայի, ընդամենը երկուսն էին՝ Մատթեոս Մամուրյանի «Հայկական նամականի»-ն և Ռեթեոս Պերպերյանի «Մարդիկ եւ Իրք»-ը: «Այդ ոսկեղինիկ մատենք կը պատկերացնեն իրենց ժամանակն,- գրում է Եղիան,- անձինք եւ անցք իբրու լուսանկարուած են այդ գործոց մէջ, ոյց հեղինակք՝ վարժապետ ու գրագետ միանգամայն՝ լուսոյ գործին զանձինս են նուիրած»: Սակայն այդ երկու գործերի տպավորությունն ու արժեքը Ե. Տեմիրճիպաշյանի համար այնքան մեծ էր, որ նա քննադատական եզրակացությունն ամփոփում է հետևյալ բարձր գնահատական խոսքով՝ «**Լուսանկար** ըսի. սակայն այդ պատկերք իղանկարի արժեքն ունին, արժեքն ունին մեծ պատկերահանաց ձեռք գծուած իղանկարաց: Կենդանի գոյնով, անշահասէր անկողմնակալ ոգով նկարուած ու դատուած են անդ մարդիկ եւ իրք»:¹

90-ական թվականները հայոց գրական կյանքում բնորոշվեցին նաև մի շարք բուռն բանավեճերով, որոնց մեջ փոքր չէր Եղիա Տեմիրճիպաշյանի դերակատարությունը: Մի քանիսը նույնիսկ ուղղակիորեն առնչվում էին հենց իրեն՝ Եղիային: Պետք է ասել, որ վերջինս ոչ միայն չէր խորշում, այլև ընդունում էր բանավեճերի օգտակարությունը: Նման մի առիթով «Կատուի մը յիշագիրք»-ում նա գրում է՝ «...Ես ախորժեցայ այդ գրական պայքարին: Կը փափաքէի որ գրագետք ամեն ժամանակ իրարու հետ վիճաբանէին հրապարակի վրայ, ուր որքան ալ գրական գործունեութիւն ըլլայ, միօրինակութիւն կը տիրէ միշտ առանց վիճաբանութեան»:²

Պետրոս Դեմիրճյան – Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է գրականագիտական 3 մենագրության, բազմաթիվ գրականագիտական և գրաքննադատական հոդվածների:

pdemirchyan@mail.ru

1 «Ռ. Յ. Պերպերեան. Մարդիկ եւ Իրք», ԳԻՇ, 1885, տետր երկուտասներորդ, էջ 212- 213:

2 «Կատուի մը յիշագիրք», Երկրագունտ, 1888, թիւ 11, էջ 496:

PETROS A. DEMIRCHYAN: - YEGHIA TEMIRCHIPASHYAN- AESTHETIC

IEWS: - Yeghia Temirchipashyan's evidences of the perception and evaluation of art, culture, literature are summarized in separate articles, poems, as well as in numerous and various publications, speaking and speeches spread in the press. «The worship of the beautiful, to whom I have dedicated my life...» he confessed.

The perception of art and beauty was typical of Yeghia since his childhood, it can be said that it was born with him. His childhood memories, descriptions of the environment, pristine nature, the charms of spring testify to that. Later, in many publications, he spoke with admiration about literature, music, painting, theatre, the outstanding people representing those arts.

And what is art, what is its essence, standard? After all, what did Ye. Temirchipashyan understand saying art. We can say with certainty that for Yeghia, first of all, it is paralleled with the concept of **harmony**. In order to achieve this goal, he views beauty as the result of development and **prosperity** in times, affirms that beauty must be based on **conformity with nature, the natural**, beauty must be in the closest relationship with **useful, truthful and moral**.

In addition to theoretical questions, Yeghia Temirchipashyan, during his journalistic activity, naturally dealt with the literary process, individual literary publications, his attitude towards writers and their opinions, in short, literary criticism.

Key words: Temirchipashyan, Yeghia, art, culture, beautiful, harmony, benevolence, naturalness, useful, true, moral, literary criticism.

ПЕТРОС ДЕМИРЧЯН: - Е.ТЕМИРЧИПАШЯН: ЭСТЕТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ:

- Свидетельства о восприятии и оценке искусства, культуры, литературы Е. Темирчипашяном можно найти как в его отдельных статьях, стихах, так и в многочисленных и разнообразных публикациях, речах и выступлениях, опубликованных в прессе. «Поклонение прекрасному, которому я посвятил свою жизнь...», признался он.

Восприятие искусства, красоты было типичным для Е.Темирчипашяна с детства, можно сказать, он родился с этим. Об этом свидетельствуют его детские воспоминания, описания окружающей среды, первозданной природы, прелестей весны. Позже во многих публикациях он с восхищением высказывался о литературе, музыке, живописи, театре, о великих деятелях этих искусств.

А что такое искусство, в чем его суть, каковы критерии? В конце концов, что понимал Е. Темирчипашян говоря об искусстве?. Можно с уверенностью сказать, что для него, прежде всего, это граничит с понятием **гармония**. Для достижения этой цели он рассматривает красоту как результат развития, **эволюции** во времени, утверждает, что красота должна быть основана на соответствии с природой, естественностью, красота должна находиться в самом тесном отношении **сплезным, истинным**, а также **нравственностью**.

Помимо теоретических постановок проблем, Егия Темирчипашян в своей журналистской деятельности, естественно, занимался также вопросами своего отношения к литературному процессу, определенным литературным изданиям, писателям и их мнениям, словом, **литературной критики**.

Ключевые слова: Темирчипашян, Егия, искусство, культура, красота, гармония, эволюция, естественность, полезный, истинный, нравственность, литературная критика.

REFERENCE

1. **Temirc''ipash'yan Ye'.**, Angegh'n erg, Ye'revan, 2015 **/In Armenian/**
2. **Temirc''ipash'yan Ye'.**, Grakan yev' imastasirakan sh'ar zh'um, K. Polis, 1883-1888 **/In Armenian/**
3. **Ch'eraz M.**, Kensagrakan myusionner, Ambogh'akan ye'rker, tiv G, P'ariz, 1929 **/In Armenian/**
4. **Fenerc''yan G., Petrosyan Hr.**, Yegia Temirc''ipash'yan: Ir keanqn ev' ir gorc'y, K.Polis, 1921 **/In Armenian/**
5. **Oshakan J.**, Hamapatker arevmtahaj grakanutean, h. 8, Antilias, 1980 **/In Armenian/**

Handesner:

Ye'rkragunt /K. Polis/, Arevelq /K. Polis/, Masis /K. Polis/, Pordz'/Tiflis/ **/In Armenian/**